



**«ՄԱՔՈՒՐ ԵՐԿԱԹԻ ԳՈՐԾԱՐԱՆ»
ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
2020թ. ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. «Մաքուր երկաթի գործարան» ԲԲԸ-ի ֆինանսական հաշվետվությունները 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար և անկախ աուդիտորական եզրակացություն
2. «Մաքուր երկաթի գործարան» ԲԲԸ-ի կառավարման մարմինների տարեկան զեկույց
3. «Մաքուր երկաթի գործարան» ԲԲԸ-ի պատասխանատու անձանց հայտարարություն

«Մաքուր երկաթի գործարան» ԲԲԸ

Ֆինանսական հաշվետվություններ

*2020 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Անկախ աուդիտորական եզրակացության հետ միասին*

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն

Ֆինանսական հաշվետվություններ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	1
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	2
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	3
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	4

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Ներածություն	5
2. Հաշվետվությունների պատրաստման հիմունքները	5
3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություններ	7
4. Հրապարակված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ	16
5. Սեզոնային տեղեկատվություն	18
6. Հաճախորդների հետ գործարքներից հասույթ	18
7. Վաճառքի ինքնարժեք	18
8. Վարչական ծախսեր	18
9. Այլ գործառնական ծախսեր	19
10. Ֆինանսական եկամուտ	19
11. Շահութահարկի զծով ծախս	19
12. Հիմնական միջոցներ	21
13. Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումներ	21
14. Ասոցիացված կազմակերպությունում ներդրումներ	22
15. Կանխավճարներ	23
16. Պաշարներ	23
17. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	24
18. Ժամկետային ավանդներ	24
19. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	24
20. Ակնկալվող վարկային կորուստների պահուստ	25
21. Կապիտալ և պահուստներ	25
22. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	26
23. Իրական արժեք և ռիսկերի կառավարում	26
24. Պայմանական պարտավորություններ	29
25. Ֆինանսավորման գործունեության արդյունքում առաջացող պարտավորությունների փոփոխություն	30
26. Կապակցված կողմեր	30



**Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ**

Ernst & Young CJSC
1 Northern Ave., office 27
Yerevan, 0001, Armenia
Tel: +374 (10) 500 790
+374 (10) 500 705
Fax: +374 (10) 500 706
www.ey.com/am

«Էրնսթ և Կանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան 0001
Հյուսիսային պող. 1, գրասենյակ 27
Հեռ. +374 (10) 500 790
+374 (10) 500 705
Ֆաքս. +374 (10) 500 706

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Մաքուր երկաթի գործարան» բաց բաժնետիրական ընկերության
Բաժնետերերին և Տնօրենների Խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Մաքուր երկաթի գործարան» բաց բաժնետիրական ընկերության («Ընկերություն») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (ՖՀՄՍ-ների):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի Միջազգային Ստանդարտներին (ԱՄՍ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է այս եզրակացության՝ «*Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ Հաշվապահների էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված *Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի միջազգային կանոնագրքի* (ներառյալ Անկախության Միջազգային Ստանդարտները) (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Աուդիտի առանցքային հարցեր

Աուդիտի առանցքային հարցերը այն հարցերն են, որոնք, ըստ մեր մասնագիտական դատողության, առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցերը դիտարկվել են ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համատեքստում՝ որպես մեկ ամբողջություն, և հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու նպատակով, և մենք չենք տրամադրում առանձին կարծիք այդ հարցերի վերաբերյալ: Մեր նկարագրությունը, թե ինչպես է ստորև նշված յուրաքանչյուր հարցը դիտարկվել մեր աուդիտի ընթացքում, ներկայացված է այդ համատեքստում:



Կառուցելով բարեկեցիկ աշխարհ

Մենք կատարել ենք մեր պարտականությունները, որոնք նկարագրված են «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում, այդ թվում՝ այս հարցերի վերաբերյալ: Համապատասխանաբար, մեր աուդիտը ներառել է ընթացակարգերի իրականացում՝ մշակված ի պատասխան ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի մեր գնահատմանը:

Մեր աուդիտորական ընթացակարգերի արդյունքները, այդ թվում՝ ստորև ներկայացված հարցերը դիտարկելիս իրականացրած ընթացակարգերը, հիմք են հանդիսանում կից ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական կարծիք արտահայտելու համար:

Աուդիտի առանցքային հարց	Ինչպես է աուդիտը դիտարկել աուդիտի առանցքային հարցը
Կապակցված կողմերի հետ գործարքներ Ընթացիկ տարվա մոլիբդենի խտանյութի վերամշակման ծառայությունների մատուցումից ամբողջ հասույթը և տրամադրված փոխառություններից տոկոսային եկամտի զգալի մասն առաջացել են կապակցված կողմերի հետ գործարքների արդյունքում: Այս հարցն առավել նշանակալի էր մեր աուդիտի իրականացման ընթացքում, քանի որ կապակցված կողմերի հետ գործարքներն էական են ֆինանսական հաշվետվությունների համար: Համապատասխան բացահայտումները ներառված են ֆինանսական հաշվետվությունների Ծանոթագրություն 26-ում:	Մենք դիտարկել ենք ղեկավարության կողմից կապակցված կողմերի հետ գործարքները հայտնաբերելու և բացահայտելու գործընթացները: Մենք վերլուծել ենք կապակցված կողմերի հետ պայմանագրերը և իրականացրել ենք վերլուծություններ՝ հասույթի հետ կապված գործարքների համար: Մենք ընտրանքի հիման վրա համեմատել ենք ֆինանսական հաշվետվություններում արտացոլված և բացահայտված կապակցված կողմերի հետ գործարքները հիմնավորող փաստաթղթերի հետ: Մենք հարցում ենք կատարել Ընկերության ղեկավարությանը բնականոն գործունեությունից դուրս գործարքների վերաբերյալ: Մենք դիտարկել ենք ֆինանսական հաշվետվություններում արտացոլված կապակցված կողմերի հետ գործարքների բացահայտումները:
Ասոցիացված կազմակերպությունում ներդրման արժեզրկում Ընկերությունը ունի ներդրում ասոցիացված կազմակերպությունում՝ «Հին Արեւի» ՓԲԸ-ում: Ընկերությունը որոշել է, որ 2020թ. տվյալ ներդրման համար առկա է արժեզրկման հայտանիշ: Ներդրման փոխհատուցվող գումարը որոշվել է զեղչված դրամական հոսքերի մեթոդով: Այս հարցն առավել նշանակալի էր մեր աուդիտի համար, քանի որ օգտագործված գնահատման մեթոդն էությանը սուբյեկտիվ է և ընդգրկում է մուտքային գործոնների վերաբերյալ զանազան ենթադրություններ: Համապատասխան բացահայտումները ներառված են ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություն 14-ում:	Մեր աուդիտորական ընթացակարգերը ներառում են նաև գնահատման մեթոդի և գնահատման մոդելի դիտարկումը: Մենք դիտարկել ենք գնահատման մեջ կիրառված հիմնական մուտքային տվյալները, ինչպիսիք են ասոցիացված կազմակերպության գործունեությունից ակնկալվող հասույթը և ազատ դրամական հոսքերը, ինչպես նաև կիրառված զեղչման տոկոսադրույթը: Մենք ներգրավել ենք մեր ներքին գնահատման մասնագետներին՝ Ընկերության ղեկավարության կողմից օգտագործված գնահատման մեթոդը և հիմնական ենթադրությունները վերլուծելու համար: Մենք դիտարկել ենք ֆինանսական հաշվետվություններում արտացոլված բացահայտումները տվյալ ներդրման վերաբերյալ:

Ընկերության 2020թ. Տարեկան հաշվետվության մեջ ներառված այլ տեղեկատվություն

Այլ տեղեկատվությունը ներառում է Տարեկան հաշվետվության մեջ ներառված տեղեկատվությունը, բացի ֆինանսական հաշվետվություններից և դրանց վերաբերյալ մեր աուդիտորական եզրակացությունից: Ղեկավարությունը պատասխանատու է այլ տեղեկատվության համար: Ակնկալվում է, որ Տարեկան հաշվետվությունը մեզ կտրամադրվի աուդիտորական եզրակացության ամսաթվից հետո:

Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը չի տարածվում այլ տեղեկատվության վրա, և մենք այդ տեղեկատվության վերաբերյալ չենք տրամադրելու կարծիք, որը որևէ ձևով կարտահայտի հավաստիացում տվյալ տեղեկատվության վերաբերյալ:

Ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի հետ կապված, մեր պարտավորությունն է ծանոթանալ վերոնշյալ այլ տեղեկատվությանը, երբ այն հասանելի կլինի մեզ, և դրանով դիտարկել, թե արդյոք առկա են էական անհամապատասխանություններ այլ տեղեկատվության և ֆինանսական հաշվետվությունների կամ աուդիտի ընթացքում ձեռք բերված մեր գիտելիքների միջև, և թե արդյոք այլ տեղեկատվությունը պարունակում է այլ էական խեղաթյուրումներ:

Ղեկավարության և Տնօրենների խորհրդի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ներին համապատասխան պատրաստելու և ճշմարիտ ներկայացնելու, ինչպես նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, համապատասխան դեպքերում անընդհատ գործելու հետ կապված հարցերը բացահայտելու և կազմակերպության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Տնօրենների խորհուրդը պատասխանատու է Ընկերության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցրած, զերծ են էական խեղաթյուրումից՝ անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ Աուդիտի Միջազգային Ստանդարտներին համաձայն իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:



Կառուցելով բարեկեցիկ աշխարհ

Աուդիտի Միջազգային Ստանդարտներին համաձայն իրականացրած աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն աուդիտի ողջ ընթացքում: Մենք նաև իրականացնում ենք հետևյալը.

- ▶ Հայտնաբերում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- ▶ Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության վերաբերյալ՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, սակայն ոչ ՇՆկերության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով:
- ▶ Գնահատում ենք կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան տեղեկատվության բացահայտման խելամուտությունը:
- ▶ Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել ՇՆկերության անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք եզրակացնում ենք, որ առկա է էական անորոշություն, մեզանից պահանջվում է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն դարձնել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդ բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են միմյան մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն ապագա իրադարձություններն ու հանգամանքները կարող են հանգեցնել ՇՆկերության գործունեության անընդհատության դադարեցմանը:
- ▶ Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:
- ▶ Ձեռք ենք բերում բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ ասոցիացված կազմակերպության ֆինանսական տեղեկատվության վերաբերյալ՝ ֆինանսական հաշվետվությունների վարաբերյալ կարծիք հայտնելու համար: Մենք պատասխանատու ենք խմբի աուդիտի ուղղորդման, վերահսկողության և իրականացման համար: Մենք պատասխանատու ենք միայն մեր աուդիտորական կարծիքի համար:

Տնօրենների Խորհրդին, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին վերահսկողությանը վերաբերող կարևոր թերությունների մասին:



Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

Տնօրենների Խորհրդին մաս տրամադրում ենք հավաստիացում, որ պահպանել ենք անկախության վերաբերյալ էթիկայի պահանջները, ինչպես մասնաճյուղի տեղեկացում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և որտեղ կիրառելի է, անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

Տնօրենների Խորհրդին հաղորդակցված հարցերից որոշում ենք այն հարցերը, որոնք համարվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում, և հետևաբար հանդիսանում են աուդիտի առանցքային հարցեր: Մենք նկարագրում ենք այդ հարցերը մեր աուդիտորական եզրակացությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով կամ կարգավորող ակտերով արգելված է այդպիսի հարցերի հրապարակային բացահայտումը, կամ երբ, խիստ բացառիկ հանգամանքներում, որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացվի աուդիտորի եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրա ներկայացման հետ կապված բացասական հետևանքները ավելի շատ կլինեն, քան դրա ներկայացումից հանրային օգուտը:

Այս անկախ աուդիտորական եզրակացության ներկայացման նպատակով անցկացված աուդիտի ղեկավար գործընկեր է հանդիսանում Քսենիա Բագինյանը:

«Էրնսթ Ընդ Յանգ» ՓԲԸ

Գլխավոր տնօրեն
Աուդիտի բաժնի գործընկեր

Էրիկ Չայրապետյան

Աուդիտի բաժնի գործընկեր

Քսենիա Բագինյան

2021թ. մարտի 30

ՀՀ, ք. Երևան



Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

<i>'000 ՀՀ դրամ</i>	<i>Ծան.</i>	<i>2020թ. դեկտեմբերի 31</i>	<i>2019թ. դեկտեմբերի 31</i>
Ակտիվներ			
Հիմնական միջոցներ	12	7,969,856	7,616,859
Ոչ նյութական ակտիվներ		2,678	2,957
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումներ	13	5,000	5,000
Ասոցիացված կազմակերպությունում ներդրումներ	14	175,652	226,279
Ոչ ընթացիկ կանխավճարներ	15	192,432	9,855,461
Ոչ ընթացիկ դեբիտորական պարտքեր	17	—	13,049,965
Հետաձգված հարկային ակտիվներ	11	—	4,959
Ոչ ընթացիկ ակտիվներ		8,345,618	30,761,480
Պաշարներ	16	720,844	757,527
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	17	15,679,318	1,292,603
Ընթացիկ կանխավճարներ	15	9,750,929	129,144
Տրված փոխառություններ	26	—	2,378,611
Շահութահարկի կանխավճար		76,226	—
Ժամկետային ավանդներ	18	—	4,818,183
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	19	2,207,174	1,276,756
Ընթացիկ ակտիվներ		28,434,491	10,652,824
Ընդամենը ակտիվներ		36,780,109	41,414,304
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	21	690,930	690,930
Զբաղիված շահույթ		30,051,575	39,456,260
Ընդամենը սեփական կապիտալ		30,742,505	40,147,190
Պարտավորություններ			
Հետաձգված հարկային պարտավորություններ	11	280,781	—
Ոչ ընթացիկ պարտավորություններ		280,781	—
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	22	242,950	163,869
Կրեդիտորական պարտքեր շահաբաժինների գծով		5,242,516	—
Կրեդիտորական պարտքեր շահութահարկի գծով		—	700,138
Կրեդիտորական պարտքեր այլ հարկերի գծով		162,626	183,270
Պահուստներ		108,731	219,837
Ընթացիկ պարտավորություններ		5,756,823	1,267,114
Ընդամենը պարտավորություններ		6,037,604	1,267,114
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		36,780,109	41,414,304

Հաստատվել է Բաժնետիրական խորհրդի կողմից 2021թ. մարտի 30-ին:



Կարեն Յանիսյան
Գլխավոր տնօրեն

Վալերի Թամրազով
Գլխավոր հաշվապահ

Կից ներկայացված ծանոթագրությունները հանդիսանում են այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

2020 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

'000 ՀՀ դրամ	Ծան.	2020 թ.	2019 թ.
Հաճախորդների հետ գործարքներից հասույթ	6	6,620,158	8,776,922
Վաճառքի ինքնարժեք	7	(4,368,971)	(5,283,361)
Համախառն շահույթ		2,251,187	3,493,561
Վարչական ծախսեր	8	(756,415)	(868,884)
Այլ գործառնական ծախսեր	9	(279,921)	(359,860)
Այլ գործառնական եկամուտ		5,091	36,276
Գործառնական շահույթ		1,219,942	2,301,093
Ֆինանսական եկամուտ	10	1,242,234	995,018
Ֆինանսական ծախսեր		(62)	(134)
Արտարժույթի վերագնահատումից զուտ օգուտ/(վնաս)		880,337	(53,662)
Ակնկալվող վարկային կորուստների գծով ծախս	20	(97,617)	(195,290)
Ասոցիացված կազմակերպության (վնասի)/շահույթի բաժնեմաս	14	(309)	4,821
Ասոցիացված կազմակերպությունում ներդրման արժեզրկումից կորուստ	14	(50,318)	(50,518)
Շահույթ նախքան շահութահարկը		3,194,207	3,001,328
Շահութահարկի գծով ծախս	11	(598,820)	(407,740)
Հաշվետու տարվա շահույթ		2,595,387	2,593,588
Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս չվերադասակարգվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ՝ հարկումից հետո			
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող բաժնային գործիքների իրական արժեքի փոփոխություն	13	–	(12,099,605)
Շահութահարկի ազդեցություն	11	–	2,419,921
Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս չվերադասակարգվող զուտ այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ		–	(9,679,684)
Հաշվետու տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո		–	(9,679,684)
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո		2,595,387	(7,086,096)
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ			
Ընկերության սեփականատերերին վերագրելի բազային և նույնացված շահույթ		37.56	37.54

Կից ներկայացված ծանոթագրությունները հանդիսանում են այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

<i>'000 ՀՀ դրամ</i>	<i>Բաժնետիրական կապիտալ (Ծան. 21)</i>	<i>Զբաղիված շահույթ</i>	<i>Իրական արժեքի պահուստ (հարկումից հետո)</i>	<i>Ընդամենը սեփական կապիտալ</i>
2019թ. հունվարի 1-ի դրությամբ	690,930	37,376,892	10,208,768	48,276,590
Հաշվետու տարվա շահույթ	–	2,593,588	–	2,593,588
Հաշվետու տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո	–	–	(9,679,684)	(9,679,684)
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո	–	2,593,588	(9,679,684)	(7,086,096)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող բաժնային գործիքների օտարումից իրական արժեքի պահուստի տեղափոխում	–	529,084	(529,084)	–
Կապիտալում ուղղակիորեն գրանցված գործարքներ սեփականատերերի հետ	–	(1,043,304)	–	(1,043,304)
Շահաբաժնի բաշխում (Ծան. 21)	–	(1,043,304)	–	(1,043,304)
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	690,930	39,456,260	–	40,147,190
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	690,930	39,456,260	–	40,147,190
Հաշվետու տարվա շահույթ	–	2,595,387	–	2,595,387
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո	–	2,595,387	–	2,595,387
Կապիտալում ուղղակիորեն գրանցված գործարքներ սեփականատերերի հետ	–	(12,000,072)	–	(12,000,072)
Շահաբաժնի բաշխում (Ծան. 21)	–	(12,000,072)	–	(12,000,072)
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	690,930	30,051,575	–	30,742,505

Կից ներկայացված ծանոթագրությունները հանդիսանում են այս ֆինանսական հաշվետվությունների
բաղկացուցիչ մասը:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

<i>'000 ՀՀ դրամ</i>	<i>Ծան.</i>	<i>2020 թ.</i>	<i>2019 թ.</i>
Գործառնական գործունեություն			
Հաճախորդներից ստացված գումարներ՝ ներառյալ ԱԱՀ		8,098,556	9,921,897
Վճարումներ մատակարարներին՝ ներառյալ ԱԱՀ		(3,316,704)	(4,440,698)
Վճարումներ աշխատակիցներին՝ ներառյալ հարկերը		(1,813,694)	(1,873,249)
Վճարումներ շահութահարկի գծով		(1,138,473)	(577,528)
Վճարումներ հարկերի գծով՝ բացառությամբ շահութահարկի		(788,833)	(1,142,466)
Տրված մվիրատվություններ		(68,676)	(62,711)
Այլ ստացված գումարներ		774	325
Այլ վճարումներ		(1,561)	(10,720)
Ստացված տոկոսներ		788,925	982,993
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ ստացված գործառնական գործունեությունից		1,760,314	2,797,843
Ներդրումային գործունեություն			
Ներդրում ժամկետային ավանդներում		(1,384,909)	(2,919,040)
Ժամկետային ավանդների մարում		6,318,674	1,452,370
Տրված փոխառություններ		(478,690)	(2,396,350)
Մուտքեր իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող բաժնային գործիքների վաճառքից		–	1,927,398
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(1,005,934)	(1,548,257)
Մուտքեր հիմնական միջոցների վաճառքից		2,386	3,148
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ ստացված/ (օգտագործված) ներդրումային գործունեությունից		3,451,527	(3,480,731)
Ֆինանսական գործունեություն			
Ստացված վարկեր և փոխառություններ		50,000	188,000
Վարկերի և փոխառությունների մարում		(50,000)	(188,000)
Վճարված շահաբաժիններ		(4,308,895)	(3,096)
Վճարված տոկոսներ		(62)	(134)
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ օգտագործված ֆինանսական գործունեությունում		(4,308,957)	(3,230)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/ (նվազում)		902,884	(686,118)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հունվարի 1-ի դրությամբ		1,276,888	1,954,399
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		28,561	8,607
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ դեկտեմբերի 31-ի դրությամբ	19	2,208,333	1,276,888

2020թ. ընթացքում, Ընկերությունը հայտարարել է 12,000,072 հազար ՀՀ դրամի շահաբաժին, որից 2,930,333 հազար ՀՀ դրամը հաշվանցվել է վերջնական մայր կազմակերպությանը տրամադրված փոխառության հետ (Ծանոթագրություն 26) և 476,519 հազար ՀՀ դրամը հանդիսանում է վերջնական մայր կազմակերպությանը շահաբաժինների գծով կրեդիտորական պարտքերի արտարժույթով վերահաշվարկման ազդեցությունը:

2019թ. ընթացքում, Ընկերությունը հայտարարել է 1,043,304 հազար ՀՀ դրամի շահաբաժին, որից 967,029 հազար ՀՀ դրամը հաշվանցվել է վերջնական մայր կազմակերպությանը տրամադրված փոխառության հետ (Ծանոթագրություն 26) և 73,179 հազար ՀՀ դրամը հանդիսանում է փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը:

Կից ներկայացված ծանոթագրությունները հանդիսանում են այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

1. Ներածություն

(ա) Ընկերության հիմնական գործունեությունը

«Մաքուր երկաթի գործարան» բաց բաժնետիրական ընկերությունը («Ընկերություն») 1968թ. հիմնադրված «Մաքուր երկաթի փորձա-արդյունաբերական գործարանի» իրավահաջորդն է: 1995թ. Ընկերությունը վերակազմավորվել է «Մաքուր երկաթի գործարան» բաց բաժնետիրական ընկերության:

Ընկերության հիմնական գործունեությունը մոլիբդենի խտանյութից ֆերոմոլիբդենի և եռակալած մետաղական մոլիբդենի արտադրությունն է: 2015թ. Ընկերությունը սկսել է մատուցել մոլիբդենի խտանյութի վերամշակման ծառայություններ: Մինչև 2015 թվականը և 2017 թվականի ընթացքում Ընկերությունը նաև արտադրել և վաճառել է իր սեփական ֆերոմոլիբդենը և եռակալած մետաղական մոլիբդենը:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան, Արցախի պող. 75:

Ընկերությունը իր գործարքների մեծամասնությունը իրականացնում է կապակցված կողմերի հետ: Արդյունքում, Ընկերությունը տնտեսապես կախված է կապակցված կողմերից: Կապակցված կողմերի հետ գործարքների մանրամասները ներկայացված են Ծանոթագրություն 26-ում:

(բ) Գործարար միջավայրը Հայաստանում

Հայաստանը շարունակում է տնտեսական բարեփոխումները և իր իրավական, հարկային և կարգավորումների հայեցակարգերի զարգացումը: Հայաստանի տնտեսության ապագա կայունությունը մեծապես կախված է այս բարեփոխումներից և զարգացումներից, ինչպես նաև կառավարության կողմից ձեռնարկվող տնտեսական, ֆինանսական և դրամավարկային միջոցառումների արդյունավետությունից: Ընկերության ղեկավարությունը գտնում է, որ այն իրականացնում է համապատասխան քայլեր ներկայումս առկա հանգամանքներում Ընկերության գործունեության կայունությունը ապահովելու համար:

Պոտենցիալ մահացու վարակվածության հանգեցնող և տարբեր իրավասություններում տարածված վիրուսի՝ կորոնավիրուսի բռնկումը 2020թ.-ին բացասաբար է անդրադարձել տարածաշրջանային և համաշխարհային տնտեսական վիճակի վրա, խափանել է վարակվածությանը ենթարկված երկրներում տեղակայված գործունեությունները և ազդել պահանջարկի և առաջարկի շղթաների վրա: Հաշվետու ժամանակաշրջանում համավարակը մեծապես չի ազդել Ընկերության գործունեության վրա: Աշխատակիցների և գործընկերների առողջությունն ու անվտանգությունը առաջնային են եղել Ընկերության համար, և Ղեկավարությունը միջոցներ է ձեռնարկել առողջապահական ռիսկերը նվազագույնի հասցնելու համար: Կորոնավիրուսի բռնկման հետագա ազդեցությունը Ընկերության գործունեության վրա դեռ պարզ չէ, և Ղեկավարությունը ուշադիր հետևում է իրավիճակին:

2. Հաշվետվությունների պատրաստման հիմունքները

(ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (ՖՀՄՍ) պահանջների համաձայն:

(բ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («ՀՀ դրամ»), որը հանդիսանում է Ընկերության ֆունկցիոնալ արժույթը և այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Այս ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հազար ՀՀ դրամով, և բոլոր արժեքները կլորացված են մոտ հազարերորդականով, եթե այլ բան նշված չէ: Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված պաշտոնական փոխարժեքները 2020թ. դեկտեմբերի 31-ի և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են համապատասխանաբար 522.59 և 479.70 ՀՀ դրամ 1 ԱՄՆ դոլարի համար:

(գ) Զափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են պատմական արժեքի սկզբունքի հիման վրա, բացառությամբ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվների:

(դ) Գնահատումների և դատողությունների օգտագործում

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունից պահանջվում է կատարել մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամուտների և ծախսերի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

2. Հաշվետվությունների պատրաստման հիմունքները (շարունակություն)

(դ) Գնահատումների և դատողությունների օգտագործում (շարունակություն)

Գնահատումները և վերջիններիս համար հիմք հանդիսացող ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում կատարվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Այն ենթադրությունների և գնահատումների հետ կապված անորոշությունների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք ենթադրել են հաջորդ ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունների տվյալների էական ճշգրտման ռիսկ, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա էական ազդեցություն ունեցող հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ կատարված կարևոր դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված են Ծանոթագրություն 13-ում՝ Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումներ:

Պաշարների համապատասխան գնագոյացման հիմքերը որոշելիս և տարվա վերջի դրությամբ առկա պաշարների արժեքն իրացման զուտ արժեքից ցածր լինելու գնահատման համար կիրառվում է ղեկավարության մասնագիտական դատողությունը (Ծանոթագրություն 16): Առկա են նաև դատողություններ պաշարների ավելցուկի և դուրսգրման ենթակա պաշարների գումարի որոշման համար, քանզի այս դատողությունները հիմնված են պաշարների օգտագործման կանխատեսումների և պահուստի մակարդակի իրատեսականության գնահատման վրա:

(ե) Իրական արժեքի չափում

Ընկերության հաշվապահական հաշվառման որոշակի քաղաքականությունների և բացահայտումների համար պահանջվում է իրական արժեքի չափում ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների համար:

Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելիս Ընկերությունը հնարավորության սահմաններում օգտագործում է դիտարկելի շուկայական տվյալները:

Իրական արժեքները դասակարգվում են ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակների՝ հիմք ընդունելով գնահատման մեթոդներում օգտագործված ելակետային տվյալները, ինչպես ներկայացված է ստորև.

- ▶ 1-ին մակարդակ. նույն ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճշգրտված):
- ▶ 2-րդ մակարդակ. 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող):
- ▶ 3-րդ մակարդակ. ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկելի շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

Եթե ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելու համար օգտագործվող ելակետային տվյալները կարող են դասակարգվել իրական արժեքի հիերարխիայի տարբեր մակարդակներում, ապա իրական արժեքի չափումն ամբողջությամբ դասակարգվում է հիերարխիայի այն նույն մակարդակում, որում դասակարգվում են այն ամենացածր մակարդակի ելակետային տվյալները, որոնք նշանակալի են ամբողջությամբ վերցված իրական արժեքի չափման համար:

Իրական արժեքի չափման վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 23-ում:

(զ) Հաշվապահական հաշվառման քաղաքականության և ներկայացման փոփոխություններ

Ընկերությունը առաջին անգամ կիրառել է ստանդարտներում կատարված որոշակի փոփոխություններ, որոնք ուժի մեջ են մտնում 2020թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Ընկերությունը դեռևս չի ընդունել որևէ ստանդարտ, մեկնաբանություն կամ փոփոխություն, որը հրապարակվել է, բայց դեռևս ուժի մեջ չի մտել: Ստորև նկարագրված են յուրաքանչյուր փոփոխության բնույթն ու ազդեցությունը.

Փոփոխություններ ՖՀՄՍ 3-ում՝ Բիզնեսի սահմանում

ՖՀՄՍ 3-ի փոփոխությունները պարզաբանում են, որ բիզնես համարվելու համար գործունեությունների և ակտիվների փոխկապակցված ամբողջությունը պետք է առնվազն ներառի ելակետային տվյալներ և բովանդակային գործընթացներ, որոնք միասին նշանակալիորեն կնպաստեն արդյունք ստեղծելու ունակությանը: Ավելին, այն սահմանում է, որ բիզնեսը կարող է գոյություն ունենալ առանց ներառելու բոլոր ելակետային տվյալները և գործընթացները, որոնք անհրաժեշտ են արդյունք ստեղծելու համար: Այս փոփոխությունները որևէ ազդեցություն չունեն Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա, բայց կարող են ազդել ապագա ժամանակահատվածների վրա, եթե Ընկերությունը ձեռք բերի որևէ բիզնեսի միավորում:

2. Հաշվետվությունների պատրաստման հիմունքները (շարունակություն)

(գ) Հաշվապահական հաշվառման քաղաքականության և ներկայացման փոփոխություններ (շարունակություն)

Փոփոխություններ \$ՀՄՍ 7, \$ՀՄՍ 9 և ՀՀՄՍ 39 ստանդարտներում՝ Տոկոսադրույքի ուղենիշի բարեփոխում.

\$ՀՄՍ 9 և ՀՀՄՍ 39, ֆինանսական գործիքներ, ճանաչումը և չափումը ստանդարտի փոփոխությունները նախատեսում են մի շարք մեղմացումներ, որոնք կիրառելի են հեջավորման բոլոր փոխհարաբերությունների համար, որոնց վրա տոկոսադրույքի ուղենիշի բարեփոխումն ուղղակի ազդեցություն ունի: Բարեփոխումն ազդում է հեջավորման փոխհարաբերությունների վրա, եթե այն առաջացնում է անորոշություն հեջավորված հոդվածի կամ հեջավորման գործիքի՝ ուղենիշի վրա հիմնված դրամական հոսքերի ժամկետների կամ գումարի վերաբերյալ: Այս փոփոխությունները որևէ ազդեցություն չունեն Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա, քանի որ Ընկերությունը չունի տոկոսադրույքի հեջավորման որևէ փոխհարաբերություն:

Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում և ՀՀՄՍ 8-ում՝ էականության սահմանումը

Փոփոխությունները ապահովում են էականության մոր սահմանում, որը մշում է, որ ,Տեղեկատվությունը էական է, եթե խելամտորեն ակնկալվում է, որ դրա բացթողումը, սխալ ներկայացումը կամ խեղաթյուրումը կարող է ազդել հիմնական օգտագործողների՝ հաշվետու կազմակերպության մասին ֆինանսական տեղեկատվություն տրամադրող ընդհանուր մշանակության ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող որոշումների վրա: Փոփոխությունները պարզաբանում են, որ էականությունը կախված կլինի ֆինանսական հաշվետվությունների համատեքստում տեղեկատվության էությունից կամ ծավալից՝ առանձին վերցրած , կամ այլ տեղեկատվության հետ համատեղ: Տեղեկատվության սխալ ներկայացումը էական է, եթե խելամտորեն ակնկալվում է, որ այն կարող է ազդել հիմնական օգտագործողների որոշումների վրա: Այս փոփոխությունները որևէ ազդեցություն չունեն Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա, և որևէ ապագա ազդեցություն Ընկերության համար չի ակնկալվում:

Փոփոխություններ ,Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքներ-ում՝ թողարկված 2018թ. մարտի 29-ին

Հայեցակարգային հիմունքները ստանդարտ չէ, և դրանում ներառված ոչ մի հիմունք չի կարող գերակայել որևէ ստանդարտում ներառված հասկացությունների կամ պահանջների նկատմամբ: Հայեցակարգային հիմունքների նպատակն է ստանդարտների մշակման գործում աջակցել ՀՀՄՍ-ին, օգնել պատրաստողներին՝ մշակելու հաշվապահական հաշվառման հետևողական քաղաքականություններ, երբ առկա չեն կիրառելի ստանդարտներ, և աջակցել բոլոր կողմերին հասկանալու և մեկնաբանելու ստանդարտները: Վերանայված Հայեցակարգային հիմունքները ներառում են մոր հասկացություններ, ակտիվների և պարտավորությունների թարմացված սահմանումներ ու ճանաչման չափանիշներ, և պարզաբանում է որոշ կարևոր հասկացություններ: Այս փոփոխությունները որևէ ազդեցություն չունեն Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

3. Հաշվապահական հաշվառման մշանակալի քաղաքականություններ

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունները կիրառվել են հետևողականորեն այս ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

(ա) Ասոցիացված կազմակերպություններ

Ասոցիացված կազմակերպություններ են հանդիսանում այն կազմակերպությունները, որոնց ֆինանսական և գործառնական քաղաքականության նկատմամբ Ընկերությունն ունի մշանակալի ազդեցություն, սակայն ոչ վերահսկողություն: Ընկերության կողմից մշանակալի ազդեցություն ենթադրվում է այն դեպքում, երբ Ընկերությանն են պատկանում այլ կազմակերպության քվեարկելու իրավունք տվող բաժնետոմսերի 20%-ից 50%-ը:

Ասոցիացված կազմակերպություններում ունեցած բաժնեմասերը հաշվառվում են բաժնեմասնակցության մեթոդով, և վերջիններիս սկզբնական ճանաչումն իրականացվում է սկզբնական արժեքով: Ներդրման սկզբնական արժեքը ներառում է գործարքի հետ կապված ծախսումները:

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները ներառում են բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրման օբյեկտների շահույթում կամ վնասում և այլ ֆինանսական արդյունքներում Ընկերության բաժնեմասն այն ճշգրտումներից հետո, որոնք իրականացվում են ներդրման օբյեկտների հաշվապահական հաշվառման քաղաքականությունն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության հետ համապատասխանեցնելու համար՝ այն ամսաթվից, երբ Ընկերությունը սկսում է մշանակալի ազդեցություն ունենալ մինչև այն ամսաթիվը, երբ դադարում է մշանակալի ազդեցություն ունենալ: Ներդրման հաշվեկշռային արժեքի գծով կատարվում են ճշգրտումներ՝ ձեռքբերման ամսաթվից ասոցիացված կազմակերպության զուտ ակտիվներում Ընկերության բաժնեմասի փոփոխությունները ճանաչելու համար:

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություններ (շարունակություն)

(ա) Ասոցիացված կազմակերպություններ (շարունակություն)

Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրման օբյեկտների հետ իրականացվող գործարքներից առաջացող չիրացված օգուտը բացառվում է ներդրման դիմաց ներդրման օբյեկտում ընկերության բաժնեմասի չափով: Չիրացված վնասը բացառվում է նույն եղանակով ինչպես չիրացված օգուտը, սակայն այնքանով, որքանով բացակայում է արժեզրկման վկայություն:

Բաժնեմասնակցության մեթոդը կիրառելուց հետո, ընկերությունը որոշում է, թե արդյոք անհրաժեշտ է ճանաչել արժեզրկումից կորուստ ասոցիացված ընկերությունում կատարած ներդրման գծով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ընկերությունը որոշում է, թե արդյոք առկա է ասոցիացված ընկերությունում կատարած ներդրման արժեզրկման անկողմնակալ վկայություն: Նման վկայության դեպքում, ընկերությունը հաշվարկում է արժեզրկման գումարը՝ որպես փոխհատուցվող գումարի և հաշվեկշռային արժեքի տարբերություն:

(բ) Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ

Հասույթը ճանաչվում է այնպես, որ նկարագրի ապրանքների և ծառայությունների՝ հաճախորդներին փոխանցման ձևը: Ծանաչված գումարը պետք է արտացոլի ընկերության կողմից ակնկալվող այն գումարը, որ կստանա այդ ապրանքների և ծառայությունների փոխանցման դեպքում: Որպեսզի բավարարվի հասույթի ճանաչման հիմնական սկզբունքը, ընկերությունը կիրառում է հինգ քայլերի մոդելը, մասնավորապես՝

- ▶ Որոշել հաճախորդի հետ կնքված պայմանագիրը:
- ▶ Որոշել պայմանագրով սահմանված կատարման ենթակա պարտականությունները: Կատարման ենթակա պարտականությունները պայմանագրով սահմանված խոստումներ են՝ հաճախորդին փոխանցելու հստակ սահմանված ապրանքներն ու ծառայությունները:
- ▶ Սահմանել գործարքի զինը: Գործարքի զինն իրենից ներկայացնում է այն գումարը, որը ընկերությունն ակնկալում է ստանալ հաճախորդներին խոստացված ապրանքների և ծառայությունների փոխանցման դիմաց: Եթե պայմանագրով խոստացված գումարը պարունակում է փոփոխական գումար, ապա ընկերությունը պետք է գնահատի այն գումարը, որը վերջինս ակնկալում է հաճախորդներին խոստացված ապրանքներն ու ծառայությունները փոխանցելու դիմաց:
- ▶ Գործարքի զինը բաշխել յուրաքանչյուր կատարման ենթակա պարտականության վրա՝ հիմք ընդունելով պայմանագրով խոստացված յուրաքանչյուր հստակ սահմանված ապրանքի կամ ծառայության մասով առանձին վերցված վաճառքի զինը:
- ▶ Հասույթը ճանաչվում է այն ժամանակ, երբ կատարման ենթակա պարտականությունը բավարարված է՝ հաճախորդին փոխանցելով խոստացված ապրանքներն ու ծառայությունները (այսինքն՝ երբ հաճախորդը ձեռք է բերում այդ ապրանքի կամ ծառայության վերահսկողությունը): Կատարման ենթակա պարտականությունը կարող է բավարարվել ժամանակի կոնկրետ պահին (որպես կանոն հաճախորդին ապրանքների փոխանցման խոստումների դեպքում) կամ ժամանակի ընթացքում (որպես կանոն հաճախորդին ծառայությունների փոխանցման խոստումների համար): Ժամանակի ընթացքում բավարարված կատարման ենթակա պարտականության համար, ընկերությունը ընտրում է առաջընթացի չափման համապատասխան միջոց սահմանելու համար, թե որքան հասույթ պետք է ճանաչվի, երբ կատարման ենթակա պարտականությունը բավարարված է:

Վաճառված ապրանքներ

Կախված առանձին վաճառքի պայմանագրերի պայմաններից՝ տարբեր է ռիսկերի և հատույցների փոխանցումների ժամկետը: Ֆերոնոլիբդենի և եռակալած մետաղական մոլիբդենի համար փոխանցումը սովորաբար տեղի է ունենում, երբ արտադրանքը մաքսագերծվում է մաքսատանը՝ արտահանման նպատակով:

Ընկերության ֆերոնոլիբդենի և եռակալած մետաղական մոլիբդենի, ինչպես նաև պղնձի օքսիդի վաճառքի պայմանագրերը սովորաբար նախատեսում են պայմանական վճարումներ, ինչպես նշված է առանձին պայմանագրերում՝ հիմք ընդունելով նմուշների հետազոտության նախնական արդյունքները և մետաղի սպիտակ գները: Վերջնահաշվարկը կատարվում է ելնելով մետաղի շուկայական գներից՝ միջինացված գնանշման որոշակի ապագա ժամանակահատվածի համար: Որպես կանոն, ֆերոնոլիբդենի, եռակալած մետաղական մոլիբդենի և պղնձի օքսիդի համար գնանշման ապագա ժամանակաշրջանը կազմում է մինչև երկու ամիս՝ առաքման ամսից հետո:

Ընկերության պայմանականորեն գնանշվող վաճառքի պայմանագրերը պարունակում են ներդրված ածանցյալ գործիք, որը առանձնացված է հիմնական պայմանագրից՝ համաձայն ՖՀՄՍ 9-ի: Պայմանականորեն գնանշվող վաճառքի համար ճանաչված առևտրային դեբիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով՝ հիմք ընդունելով ֆորվարդային գինը: 2020 և 2019 թթ. ընթացքում ընկերությունը չի ունեցել ֆերոնոլիբդենի և մոլիբդենի վաճառք: 2020թ. ընթացքում իր արտադրական թափոններից ընկերությունը արտադրել և վաճառել է նոր արտադրանք՝ պղնձի օքսիդ:

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություններ (շարունակություն)

(բ) Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ (շարունակություն)

Ծառայություններ

Մատուցված ծառայություններից ստացված հասույթը ճանաչվում է հաշվետու ամսաթվի դրությամբ գործարքի ավարտ-վածության աստիճանին համամասնորեն, երբ կատարման ենթակա պարտականությունը բավարարված է: Գործարքի ավարտ-վածության աստիճանը գնահատվում է կատարված աշխատանքների ուսումնասիրու-թյան կամ ընդունման ակտերի հիման վրա:

(գ) Ֆինանսական եկամուտ

Ընկերության ֆինանսական եկամուտը ներառում է ներդրված միջոցների և տրամադրված փոխառությունների գծով տոկոսային եկամուտը:

Տոկոսային եկամուտը ճանաչվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

(դ) Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով իրականացվող գործարքները փոխարկվում են Ընկերության ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Դրամային հոդվածների գծով արտարժույթով իրականացված գործարքներից շահույթը կամ վնասը հանդիսանում է հաշվետու տարվա սկզբի դրությամբ ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, արդյունավետ տոկոսադրույքով և ժամանակաշրջանի ընթացքում վճարումներով ճշգրտված ամորտիզացված արժեքի և արտարժույթով արտահայտված ու հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ գործող փոխարժեքով փոխարկված ամորտիզացված արժեքի տարբերությունը: Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածները փոխարկվում են գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

Արտարժույթի փոխարկումից առաջացող տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

(ե) Աշխատակիցների հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով պարտականությունները չափվում են առանց զեղչման և ծախսագրվում են համապատասխան ծառայությունը մատուցելուց հետո: Պարտավորությունը ճանաչվում է այն գումարի չափով, որն ակնկալվում է վճարել որպես կարճաժամկետ դրամական միջոցների տեսքով պարգևավճար-, եթե Ընկերությունն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտա-կա-նութ-յուն այդ գումարը վճարել որպես աշխատակցի կողմից նախկինում մատուցված ծառայության արդյունք կամ կարող է արժանահավատորեն գնահատել պարտականությունը:

(զ) Շահութահարկ

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Այն ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ուղղակիորեն սեփական կապիտալում կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված տարրերին:

i. Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկը տարվա հարկվող շահույթի կամ վնասի գծով վճարման կամ ստացման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ և ներառում է նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

ii. Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը ճանաչվում է ֆինանսական հաշվառման նպատակով օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային հաշվառման նպատակով օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկը չի ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչման հետ կապված այն գործարքում, որը չի հանդիսանում ձեռնարկատիրական գործունեության միավորում, և որը ազդեցություն չունի հաշվապահական կամ հարկվող շահույթի կամ վնասի վրա:

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություններ (շարունակություն)

(գ) Շահութահարկ (շարունակություն)

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է չօգտագործված հարկային վնասների, հարկային արտոնությունների և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այնքանով, որքանով հավանական է, որ հարկային օգուտը կիրացվի:

Հետաձգված հարկի գումարը չափվում է՝ կիրառելով հարկի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկի չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կարող են առաջանալ, եթե Ընկերությունը կիրառի այն մոտեցումը, որով հաշվետու ժամանակաշրջանի վերջում ակնկալվում է վերականգնել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքը:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե Ընկերությունն ունի ընթացիկ հարկային ակտիվներն ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և հետաձգված հարկային ակտիվներն ու հետաձգված հարկային պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկատուից կամ տարբեր հարկատուներից, սակայն Ընկերությունը մտադիր է հարկային պարտավորությունները մարել և հարկային ակտիվներն իրացնել զուտ հիմունքով կամ միաժամանակ իրացնել հարկային ակտիվներն ու մարել հարկային պարտավորությունները:

(ե) Պաշարներ և վաճառքի ինքնարժեք

Պաշարները չափվում են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների սկզբնական արժեքը հաշվարկվում է «առաջինը՝ մուտք, առաջինը՝ ելք» սկզբունքով և ներառում է պաշարների ձեռքբերման ծախսումները, արտադրական կամ փոխարկման ծախսումները և դրանք ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսումներ: Արտադրված պաշարների և անավարտ արտադրանքի դեպքում սկզբնական արժեքը ներառում է արտադրական վերադիր ծախսումների համապատասխան մասը՝ հիմք ընդունելով արտադրական նորմատիվային հզորությունը:

Իրացման զուտ արժեքը բնականոն գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար գնահատված ծախսումները:

Ընկերության մոլիբդենի խտանյութի գնման պայմանագրերը սովորաբար նախատեսում են պայմանական վճարումներ, ինչպես նշված է առանձին պայմանագրերում՝ հիմք ընդունելով մոլուշների հետազոտության նախնական արդյունքները և մետաղի սփոթ գները: Վերջնահաշվարկը կատարվում է ելնելով մետաղի միջին շուկայական գներից՝ միջինացված գնանշման որոշակի ապագա ժամանակահատվածի համար: Որպես կանոն, մոլիբդենի խտանյութի համար գնանշման ապագա ժամանակաշրջանը կազմում է մինչև երկու ամիս՝ առաքման ամսից հետո: 2020 և 2019 թթ. ընթացքում Ընկերությունը չի ունեցել մոլիբդենի խտանյութի ձեռքբերում:

(ը) Այլ ծախսեր

Սոցիալական ծրագրերի գծով ծախսումներ

Այն չափով որքանով սոցիալական ծրագրերին Ընկերության հատկացումները ծառայում են հանրության շահերին և չեն սահմանափակվում Ընկերության աշխատակիցներով, դրանք ճանաչվում են շահություն կամ վնասում՝ առաջանալուն պես:

(թ) Հիմնական միջոցներ

1. Ճանաչում և չափում

Հիմնական միջոցների միավորները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռքբերմանն ուղղակիորեն վերագրելի ծախսումները: Սեփական ուժերով կառուցված ակտիվների սկզբնական արժեքը ներառում է նյութերի արժեքը, ուղղակի աշխատուժի գծով ծախսերը, ակտիվն իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջա-կա-նորեն կապված ցանկացած այլ ծախսումները, ակտիվի ապատեղակայման և քանդման ծախսերը, տեղանքի վերականգնման ծախսերը և կապիտալացված փոխառության ծախսումները: Ձեռքբերված համակարգչային ծրագիրը, որը հանդիսանում է համապատասխան սարքավորման ֆունկցիոնալության անբաժանելի մասը, կապիտալացվում է որպես սարքավորման մաս:

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություններ (շարունակություն)

(թ) Հիմնական միջոցներ (շարունակություն)

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ (հիմնական բաղկացուցիչներ):

Հիմնական միջոցի միավորի օտարումից ստացված շահույթը և վնասը որոշվում են՝ համեմատելով օտարումից ստացված մուտքերը հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի հետ և ճանաչվում են զուտ հիմունքով «Այլ եկամուտ/Այլ ծախս» հոդվածում՝ շահույթում կամ վնասում:

ii. Հետագա ծախսումներ

Հիմնական միջոցների բաղկացուցիչ փոխարինման ծախսերը ճանաչվում են միավորի հաշվեկշռային արժեքում, երբ հավանական է, որ դրա հետևանքով Ընկերության ապագա տնտեսական օգուտների ներհոսքը կաճի, և վերջինիս արժեքը հնարավոր կլինի արժանահավատորեն չափել: Փոխարինվող բաղկացուցիչի հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է: Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

iii. Մաշվածություն

Հիմնական միջոցների միավորների մաշվածության հաշվարկը սկսվում է այն ամսաթվից, երբ դրանք տեղադրվում են և պատրաստ են շահագործման համար, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործման համար պատրաստ լինելու ամսաթվից: Մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա՝ հանած դրա մնացորդային արժեքը:

Մաշվածությունը, ընդհանուր առմամբ, ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների միավորի յուրաքանչյուր մասի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը: Հողատարածքի գծով մաշվածություն չի հաշվառվում:

Հիմնական միջոցների խոշոր միավորների օգտակար ծառայության գնահատված ժամկետներն ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար հետևյալն են.

Շենքեր	12-ից 40 տարի
Մեքենա-սարքավորումներ	5-ից 20 տարի
Փոխադրամիջոցներ	2-ից 9 տարի
Տնտեսական գույք	1-ից 5 տարի

Մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

(ժ) Ոչ նյութական ակտիվներ

i. Ճանաչում և չափում

Ընկերության կողմից ձեռք բերված ոչ նյութական ակտիվները, որոնք ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

ii. Հետագա ծախսումներ

Հետագա ծախսումները ճանաչվում են միավորի հաշվեկշռային արժեքում միայն այն պարագայում, եթե դրանք ավելացնում են Ընկերության ապագա տնտեսական օգուտների ներհոսքը: Մնացած բոլոր ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

iii. Ամորտիզացիա

Ամորտիզացիան հաշվարկվում է ակտիվի արժեքից կամ այլ փոխարինող գումարից՝ հանած մնացորդային արժեքը:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը:

Գնահատված օգտակար ծառայության ժամկետները ընթացիկ և համադրելի ժամանակահատվածների համար հետևյալն են.

Ծրագիր	10 տարի
Արտոնագրեր և այլ ակտիվներ	3-ից 10 տարի

Ամորտիզացիայի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտին և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում են:

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություններ (շարունակություն)

(h) Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսեր

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Սովորական բաժնետոմսերի և բաժնետոմսերի օպցիոնների թողարկմանն ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսումները ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում՝ հաշվի առնելով հարկային հետևանքները:

(l) Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական գործիքը մի պայմանագիր է, որը մի կազմակերպությունում առաջացնում է ֆինանսական ակտիվ, իսկ մյուսում՝ ֆինանսական պարտավորություն կամ բաժնային գործիք:

i. Ֆինանսական ակտիվներ

Սկզբնական ճանաչում և չափում

Սկզբնական ճանաչման ժամանակ ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետագայում ամորտիզացված արժեքով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող և իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող: Սկզբնական ճանաչման ժամանակ ֆինանսական ակտիվների դասակարգումը կախված է վերջիններիս դրամական հոսքերի բնույթից և դրանք կառավարելու ԸՆկերության բիզնես մոդելից: Բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսավորման բաղադրիչ, կամ որոնք համար ԸՆկերությունը օգտագործել է կիրառելի նպատակահարմար մոտեցում ԸՆկերությունը սկզբնապես ֆինանսական ակտիվը չափում է իր իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվը իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող չէ:

Որպեսզի ֆինանսական ակտիվը դասակարգվի և չափվի ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով, անհրաժեշտ է, որ վերջինս առաջացնի դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են «բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումները» (SPPI): Այս գնահատումը կոչվում է SPPI թեստ և կատարվում է գործիքի մակարդակով:

ԸՆկերության ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը արտացոլում է ԸՆկերության ֆինանսական ակտիվների կառավարումը դրամական հոսքեր ձևավորելու նպատակով: Բիզնես մոդելը սահմանում է, թե արդյոք դրամական հոսքերը ձևավորվում են պայմանագրային դրամական հոսքերի հավաքագրումից, ֆինանսական ակտիվների վաճառքից կամ միաժամանակ՝ երկուսից:

Ֆինանսական ակտիվների գնումները կամ վաճառքները, որոնք պահանջում են ակտիվի մատակարարում շուկայում գործող նորմերով կամ գործարար սովորություններով (կանոնավոր գործարքներում) սահմանված ժամկետի ընթացքում, ճանաչվում են գործարքի ամսաթվին, այսինքն՝ այն ամսաթվին, երբ ԸՆկերությունը ձեռք է բերել կամ վաճառել ակտիվը:

Հետագա չափում

Հետագա չափման նպատակներով ֆինանսական ակտիվները դասակարգվում են չորս դասերից մեկում

- ▶ Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ (պարտքային գործիքներ),
- ▶ Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ, որոնց կուտակված օգուտները և կորուստները ապաճանաչման ժամանակ վերադասակարգվում են (պարտքային գործիքներ),
- ▶ Իրական արժեքով նախորոշված՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ, որոնց կուտակված օգուտները կամ կորուստները ապաճանաչման ժամանակ չեն վերադասակարգվում (բաժնային գործիքներ),
- ▶ Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասով միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ (պարտքային գործիքներ)

ԸՆկերությանն առավել բնորոշ է ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների դասը: ԸՆկերությունը ֆինանսական ակտիվները չափում է ամորտիզացված արժեքով, եթե բավարարված են ստորև թվարկված երկու պայմանները.

- ▶ Ֆինանսական ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է ֆինանսական ակտիվները պահելը՝ պայմանագրային դրամական հոսքերը հավաքագրելու նպատակով, և
- ▶ Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական միջոցների հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներն են:

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություններ (շարունակություն)

(I) Ֆինանսական գործիքներ (շարունակություն)

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների հետագա չափումներն իրականացվում են կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, և ենթակա են արժեզրկման գնահատման: Օգուտներն ու կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում, եթե ակտիվը ապաճանաչվում է, վերանայվում է կամ արժեզրկվում է:

Ընկերության ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներում ներառվում են բանկային հաշիվները և ավանդները, առևտրային դեբիտորական պարտքերը և վերջնական մայր կազմակերպությանը տրված փոխառությունները:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ (պարտքային գործիքներ)

Ընկերությունը պարտքային գործիքները չափում է իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով, եթե միաժամանակ բավարարված են ստորև թվարկված պայմանները.

- ▶ Ֆինանսական ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է ակտիվը պահել միաժամանակ պայմանագրային դրամական հոսքերը հավաքագրելու և վաճառելու նպատակով, և
- ▶ Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի սահմանված ամսաթվերին առաջացնում են դրամական միջոցների հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքների տոկոսային եկամուտը, արտարժույթի փոխարժեքի վերագնահատումները և արժեզրկումից կորուստները կամ հակադարձումները ճանաչվում են շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում և հաշվարկվում են նույն կերպ, ինչպես ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները: Իրական արժեքի մնացած փոփոխությունները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում: Ապաճանաչման ժամանակ, իրական արժեքի կուտակված փոփոխությունը, որը ճանաչվել է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում, վերադասակարգվում է շահույթում կամ վնասում:

Ընկերությունը չունի իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքներ:

Սկզբնական ճանաչումից հետո Ընկերությունը երբեմն կարող է ընտրել իր բաժնային ներդրումներից մի մասն առանց հետագա վերանայման դասակարգել որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող բաժնային գործիքներ, երբ դրանք համապատասխանում են կապիտալի գործիքի սահմանմանը՝ համաձայն ՀՀՄՍ 32-ի «*Ֆինանսական գործիքներ. Ներկայացում*» ստանդարտի, և չեն պահվում առևտրային նպատակով: Նման դասակարգումը որոշվում է առանձին՝ յուրաքանչյուր գործիքի համար:

Այս բաժնային գործիքներից օգուտները կամ վնասները երբեք չեն վերադասակարգվում շահույթի կամ վնասի կազմ: Շահաբաժինները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ որպես այլ եկամուտ, երբ վճարման իրավունքը հաստատվել է, բացառությամբ, երբ Ընկերությունը օգուտ է ստանում տվյալ մուտքերից՝ գործիքի արժեքի մի մասի վերականգնման միջոցով: Այդ դեպքում նման օգուտները հաշվառվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում: Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող բաժնային գործիքները ենթակա չեն արժեզրկման գնահատման: Այդ գործիքների օտարումից հետո, կուտակված Իրական արժեքի պահուստը փոխանցվում է չբաշխված շահույթին:

Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվը հիմնականում ապաճանաչվում է (այսինքն՝ հանվում է Ընկերության ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունից), երբ

- ▶ ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցրել են իրենց ուժը, կամ
- ▶ Ընկերությունը փոխանցել է ակտիվից դրամական միջոցների հոսքերի ստացման իրավունքները կամ ստանձնել է ստացված դրամական միջոցների հոսքերը ամբողջությամբ երրորդ կողմին վճարելու պարտականություն առանց էական ուշացման փոխանցման համաձայնագրի համաձայն, և ա) Ընկերությունը փոխանցել է, ըստ էության, ակտիվի բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ բ) Ընկերությունը ոչ փոխանցել է, ոչ պահպանել է ակտիվի, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, բայց փոխանցել է ակտիվի վերահսկողությունը:

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություններ (շարունակություն)

(I) Ֆինանսական գործիքներ (շարունակություն)

Երբ Ընկերությունը փոխանցել է ակտիվից դրամական միջոցների հոսքերի ստացման իրավունքները կամ ձեռք է բերել փոխանցման համաձայնագիր, վերջինս պետք է գնահատի, թե ինչ չափով է պահպանել ակտիվի սեփականության հետ կապված ռիսկերն ու հատույցները: Երբ Ընկերությունը ոչ փոխանցել է, ոչ պահպանել է ակտիվի, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, ոչ էլ փոխանցել է ակտիվի վերահսկողությունը, ապա Ընկերությունը շարունակում է ճանաչել փոխանցված ակտիվը իր շարունակվող ներգրավվածության չափով: Այս դեպքում, Ընկերությունը նաև ճանաչում է դրա հետ կապված պարտավորությունը: Փոխանցված ակտիվը և դրա հետ կապված պարտավորությունը չափվում են այն հիմքով, որը արտացոլում է Ընկերության պահպանած իրավունքներն ու պարտականությունները:

Շարունակվող ներգրավվածությունը, որը ձեռք է բերում փոխանցված ակտիվի նկատմամբ երաշխիքի ձև, չափվում է ակտիվի սկզբնական հաշվեկշռային արժեքի և այն առավելագույն արժեքից նվազագույնով, որը Ընկերությունից կարող է պահանջվել մարել:

ii. Ֆինանսական պարտավորություններ

Սկզբնական ճանաչում և չափում

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են սկզբնական ճանաչման ժամանակ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորություններ, վարկեր և փոխառություններ, կրեդիտորական պարտքեր, կամ անհրաժեշտության դեպքում ածանցյալ գործիքներ՝ նախատեսված որպես արդյունավետ հեջավորման գործիքներ: Բոլոր ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, իսկ վարկերի ու փոխառությունների և կրեդիտորական պարտքերի դեպքում՝ համաձայն ուղղակիորեն վերագրելի գործարքային ծախսերը: Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը, բանկային օվերդրաֆտները:

Հետագա չափում

Հետագա չափման նպատակով ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են երկու տեսակի.

- ▶ Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասով միջոցով չափվող ֆինանսական պարտավորություններ,
- ▶ Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ (վարկեր և փոխառություններ):

Ընկերությունը չունի իրական արժեքով՝ շահույթի կամ վնասով միջոցով չափվող որևէ ֆինանսական պարտավորություն:

Ֆինանսական պարտավորությունը ապաճանաչվում է, երբ դրա հետ կապված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցրած է ճանաչվում: Երբ գոյություն ունեցող ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է միևնույն փոխատուի՝ էականորեն տարբեր պայմաններով մեկ այլ պարտավորությամբ, կամ գոյություն ունեցող պարտավորության պայմանները էականորեն ձևափոխվում են, ապա այդպիսի փոխարինումը կամ ձևափոխումը դիտվում է որպես սկզբնական պարտավորության ապաճանաչում և նոր պարտավորության ճանաչում, և համապատասխան հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքներում:

iii. Ֆինանսական գործիքների հաշվանցումը

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, և զուտ գումարը ներկայացվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, եթե Ընկերությունն ունի ճանաչված գումարները հաշվանցելու ներկայումս իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու, միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

(Խ) Արժեզրկում

i. Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ

Ընկերությունը ճանաչում է ակնկալվող վարկային կորուստների պահուստ բոլոր պարտքային գործիքների համար, որոնք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Ակնկալվող վարկային կորուստների պահուստը հիմնված է պայմանագրի համաձայն պայմանագրային դրամական միջոցների հոսքերի և Ընկերության կողմից ստացվելիք ակնկալվող դրամական հոսքերի տարբերության վրա՝ զեղչված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով: Ակնկալվող դրամական միջոցների հոսքերը ներառում են գրավադրված միջոցների վաճառքից ստացվող դրամական միջոցների հոսքերը կամ այլ պայմանագրային պայմանների մաս կազմող պարտքային դիրքի ամրացումները:

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություններ (շարունակություն)

(Խ) Արժեզրկում (շարունակություն)

Ակնկալվող վարկային կորուստների պահուստները ճանաչվում են երկու փուլով: Պարտքային ռիսկերի ենթարկվածության բոլոր տեսակների համար, որոնց պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից ի վեր եականորեն չի ավելացել, ակնկալվող վարկային կորուստների պահուստները ձևավորվում են այն վարկային կորուստների համար, որոնք առաջանում են հաջորդող 12 ամիսների ընթացքում դեֆոլտի հավանական դեպքերի արդյունքում (12-ամսյա ժամանակահատվածում ակնկալվող վարկային կորուստներ): Պարտքային ռիսկերի ենթարկվածության բոլոր տեսակների համար, որոնց պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից ի վեր եականորեն ավելացել է, ակնկալվող վարկային կորուստների պահուստը պետք է ձևավորել ակտիվի ողջ ժամկետայնության ընթացքում ակնկալվող վարկային կորուստների համար, անկախ դեֆոլտի տեղի ունենալու ժամկետից (ակտիվի ողջ ժամկետայնության ընթացքում ակնկալվող վարկային կորուստներ):

Առևտրային դեբիտորական պարտքերի և պայմանագրային ակտիվների դեպքում, Ընկերությունը կիրառում է ակնկալվող վարկային կորուստների հաշվարկման պարզեցված մոտեցում: Հետևաբար, Ընկերությունը չի հետևում պարտքային ռիսկի փոփոխություններին, այլ յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին կորուստի պահուստը ճանաչում է՝ հիմք ընդունելով ողջ ժամկետայնության ընթացքում ակնկալվող վարկային կորուստները: Ընկերությունը բանկային հաշիվների և ավանդների, ինչպես նաև առևտրային դեբիտորական պարտքերի համար պահուստը հաշվարկում է՝ հիմք ընդունելով երկարաժամկետ գործընկերոջ ռիսկի վարկանիշը, իսկ տրված փոխառությունների պահուստը՝ հիմք ընդունելով Մուդիզի կողմից տրված ոլորտի դեֆոլտի հավանականությունը:

Ընկերությունը ֆինանսական ակտիվը համարում է դեֆոլտ եղած, եթե դրա գծով պայմանագրային վճարումները 90 օր և ավել ժամկետանց են: Այնուամենայնիվ, որոշակի դեպքերում, Ընկերությունը կարող է ֆինանսական ակտիվը համարել դեֆոլտ եղած, եթե ներքին կամ արտաքին տեղեկատվությունը ցույց է տալիս, որ հավանական չէ, որ Ընկերությունը մինչև Ընկերության կողմից պահվող որևէ պարտքային դիրքի ամրապնդումը հաշվի առնելը ամբողջությամբ կստանա պայմանագրային գումարը: Ֆինանսական ակտիվը դուրս է գրվում, եթե առկա չէ պայմանագրային դրամական միջոցների հոսքերի վերականգնման ողջամիտ ակնկալիք:

ii. Ոչ ֆինանսական ակտիվներ

Ընկերության ոչ ֆինանսական ակտիվների, բացառությամբ պաշարների և հետաձգված հարկային ակտիվների, հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ որոշելու արդյոք առկա է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված համարվել: Եթե որևէ այդպիսի հայտանիշ առկա է, ապա գնահատվում է ակտիվի փոխհատուցվող գումարը:

Արժեզրկման ստուգման նպատակով ակտիվները, որոնց արժեզրկումը հնարավոր չէ գնահատել անհատական հիմունքով, խմբավորվում են ակտիվների փոքրագույն խմբերի, որոնք շարունակական օգտագործման արդյունքում առաջացնում են այլ ակտիվներից կամ ակտիվների խմբերից կամ դրամաստեղծ միավորից մեծապես անկախ դրամական միջոցների ներհոսքեր: Ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը որոշվում է որպես հետևյալ երկու մեծություններից առավելագույնը. օգտագործման արժեք և իրական արժեք՝ համաձայն վաճառքի ծախսերը: Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը գեղջվում են՝ օգտագործելով մինչև հարկումը գեղջման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի տվյալ շուկայի ներկա գնահատականը և այդ ակտիվին կամ դրամաստեղծ միավորին բնորոշ ռիսկերը:

Արժեզրկումից կորուստ ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է վերջինիս գնահատված փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Դրամաստեղծ միավորների գծով ճանաչված արժեզրկումից կորուստները տեղաբաշխվում են դրամաստեղծ միավորի կազմի մեջ մտնող ակտիվների հաշվեկշռային արժեքները համամասնության հիմունքով նվազեցնելու համար:

Նախորդ ժամանակաշրջաններում ճանաչված արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ արժեզրկումից վնասների նվազեցման կամ վերացման հայտանիշներ բացահայտելու նպատակով: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլինի, առանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլինի:

(Ծ) Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Ընկերությունը՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, ունի ընթացիկ իրավական կամ կառուցողական պարտավորություն, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, և հավանական է, որ այդ պարտավորությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Պահուստները որոշվում են ակնկալվող դրամական միջոցների ապագա հոսքերը գեղջելով հարկումից առաջ այն դրույքով, որն արտացոլում է տվյալ շուկայում փողի ժամանակային արժեքը և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերը: Ձեռքի ծախսագրումը ճանաչվում է որպես ֆինանսական ծախս: Ընկերությունը պահուստ է ճանաչում չօգտագործված արձակուրդային վճարների և աշխատակիցներին լրացուցիչ պարգևավճարների գծով:

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություններ (շարունակություն)

(կ) Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ

Ընկերությունը ներկայացնում է մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային և նոսրացված շահույթի մասին տեղեկատվություն իր սովորական բաժնետոմսերի համար: Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթը հաշվարկվում է Ընկերության սովորական բաժնետոմսերի տիրապետողներին վերագրվող շահույթը կամ վնասը բաժանելով այդ ժամանակաշրջանի ընթացքում շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի միջին կշռված թվին՝ սեփական բաժնետոմսերի քանակի ճշգրտմամբ: Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթը հաշվարկվում է նպատակով Ընկերությունը ճշգրտում է իր սովորական բաժնետոմսերի տիրապետողներին վերագրվող շահույթը կամ վնասը և շրջանառության մեջ գտնվող բաժնետոմսերի միջին կշռված թվին՝ սեփական բաժնետոմսերի քանակի ճշգրտմամբ՝ բոլոր նոսրացնող պոտենցիալ սովորական բաժնետոմսերի ազդեցությունը հաշվի առնելով:

(հ) Սեզմենտային հաշվետվություններ

Գործառնական սեզմենտը Ընկերության այն բաղադրիչն է, որը ներգրավված է ձեռնարկատիրական գործունեության մեջ, որից այն կարող է վաստակել հասույթներ և կրել ծախսեր, ներառյալ Ընկերության այլ բաղադրիչների հետ գործառնականություններին վերաբերող հասույթները և ծախսերը: Բոլոր գործառնական սեզմենտների գործառնական արդյունքները կանոնավոր կերպով վերանայվում են Խորհրդի կողմից՝ սեզմենտին միջոցների բաշխման վերաբերյալ որոշում կայացնելու և դրա գործունեությունը գնահատելու նպատակով: Ղեկավարությունը գտնում է, որ Ընկերությունը բաղկացած է մեկ գործառնական սեզմենտից:

4. Հրապարակված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ

Ստորև նկարագրված են հրապարակված մոր և փոփոխված ստանդարտներն ու մեկնաբանությունները, որոնք Ընկերության ֆինանսական հաշվետվություններին թողարկման ժամանակ դեռևս ուժի մեջ չեն եղել: Ընկերությունը պատրաստվում է կիրառելիության դեպքում ընդունել այս մոր և փոփոխված ստանդարտները և մեկնաբանությունները, երբ դրանք ուժի մեջ մտնեն:

Փոփոխություններ ԴՀՄՍ 1-ում. Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ

2020 թ. հունվարին ԴՀՄՍ-ն փոփոխություններ է հրապարակել ԴՀՄՍ 1-ի 69-ից 76 պարբերություններում՝ պարտավորությունները որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ դասակարգելու պահանջները հստակեցնելու համար: Փոփոխությունները պարզաբանում են.

- ▶ Ինչ է նշանակում մարումը հետաձգելու իրավունք,
- ▶ Որ հետաձգելու իրավունքը պետք է գոյություն ունենա հաշվետու ժամանակաշրջանի ավարտին
- ▶ Որ դասակարգման վրա չի ազդում կազմակերպության՝ հետաձգելու իրավունքը օգտագործելու հավանականությունը
- ▶ Որ միայն այն դեպքում, երբ փոխարկելի պարտավորության մեջ ներդրված ածանցյալ գործիքն ինքնին հանդիսանում է բաժնային գործիք, ապա պարտավորության պայմանները չեն ազդի դրա դասակարգման վրա:

Փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2023 թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար և պետք է կիրառվեն հետընթաց կերպով: Ընկերությունը ներկայումս գնահատում է փոփոխությունների ազդեցությունը իր ընթացիկ գործունեության վրա:

Անդրադարձ հայեցակարգային հիմունքներին. ՖՀՄՍ 3-ի փոփոխություններ

2020 թ. մայիսին ԴՀՄՍ-ն փոփոխություններ է հրապարակել ՖՀՄՍ 3-ում՝ «Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ - հղում հայեցակարգային հիմունքներին»: Նախատեսվում է, որ փոփոխությունները կփոխարինեն 1989 թ. թողարկված, Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հիմունքներին վերաբերող հղումը՝ 2018 թ. մարտին թողարկված, Ֆինանսական հաշվետվությունների հայեցակարգային հիմունքներին հղումով՝ առանց դրա պահանջների էական փոփոխության:

Խորհուրդը նաև բացառություն է ավելացրել ՖՀՄՍ 3-ի ճանաչման սկզբունքում՝ խուսափելու «2-րդ օրե հավանական շահույթների կամ վնասների թողարկումից, որոնք առաջանում են պարտավորություններից և պայմանական պարտավորություններից, որոնք պետք է լինեին ԴՀՄՍ 37-ի կամ ՖՀՄՍ 21-ի գանձումների շրջանակում, եթե առանձին առաջանային»:

Միևնույն ժամանակ, Խորհուրդը որոշեց պարզաբանել ՖՀՄՍ 3-ում առկա ուղեցույցը պայմանական ակտիվների վերաբերյալ, որոնց վրա ազդեցություն չի ունենա «ֆինանսական հաշվետվությունների հայեցակարգային հիմունքներին հղումի փոխարինումը»:

Փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2022թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար և կիրառվում են առաջընթաց կերպով: Ակնկալվում է, որ փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Ընկերության վրա:

4. Հրապարակված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ (շարունակություն)

Հիմնական միջոցներ. Հասույթ մինչև նպատակային օգտագործումը՝ ՀՀՄՍ 16-ի փոփոխություններ

2020թ. մայիսին ՀՀՄՍ-ն թողարկել է ,Հիմնական միջոցներ. Հասույթ մինչև նպատակային օգտագործումը, որն արգելում է կազմակերպություններին հիմնական միջոցների արժեքից հանել այն արտադրված իրերի վաճառքից ստացված հասույթը, որը ստացվել է այդ ակտիվը դեկավարության կողմից նախատեսված եղանակով օգտագործման համար անհրաժեշտ տեղանքի և վիճակի բերման ժամանակ: Փոխարենը, կազմակերպությունը ճանաչում է այդպիսի իրերի վաճառքից ստացված հասույթը և արտադրության ծախսերը՝ շահույթում կամ վնասում:

Փոփոխությունն ուժի մեջ է մտնում 2022թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար, և այն պետք է կիրառվի հետընթաց կերպով այն հիմնական միջոցների վրա, որոնք պատրաստ են օգտագործման համար, երբ կազմակերպությունը կիրառում է փոփոխությունն առաջին անգամ:

Ակնկալվում է, որ փոփոխություններն էական ազդեցություն չեն ունենա Ընկերության վրա:

Ամբարենպաստ պայմանագրեր. Պայմանագրի կատարման ծախսեր՝ ՀՀՄՍ 37-ի փոփոխություններ

2020 թ. մայիսին ՀՀՄՍ-ն փոփոխություններ է թողարկել ՀՀՄՍ 37-ում՝ հստակեցնելու, թե ինչ ծախսեր կազմակերպությունը պետք է ներառի՝ պայմանագիրը ամբարենպաստ կամ վնասաբեր գնահատելու ժամանակ:

Փոփոխությունները կիրառում են ,ուղղակիորեն կապված ծախսերի մոտեցում: Ծախսերը, որոնք ուղղակիորեն վերաբերում են ապրանքների կամ ծառայությունների տրամադրման պայմանագրին ներառում են և՛ հավելյալ ծախսեր, և՛ ծախսերի բաշխում, որոնք ուղղակիորեն կապված են պայմանագրի գործունեության հետ: Ընդհանուր և վարչական ծախսերը ուղղակիորեն չեն վերաբերում պայմանագրին և բացառվում են, եթե դրանք ըստ պայմանագրի չեն գանձվում գործընկերոջից:

Փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2022թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Ընկերությունը այս փոփոխությունները կկիրառի այն պայմանագրերի նկատմամբ, որոնց գծով դեռ չի կատարել իր բոլոր պարտավորությունները այն հաշվետու տարվա սկզբին որի ընթացքում առաջին անգամ կիրառել է փոփոխությունը:

ՀՀՄՍ 1 Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների առաջին անգամ ընդունումը - դուստր կազմակերպությունը՝ որպես առաջին անգամ կիրառող

ՀՀՄՍ ստանդարտների 2018-2020 թթ. տարեկան բարեփոխումների շրջանակում ՀՀՄՍ-ն փոփոխություն է կատարել ՀՀՄՍ 1-ում՝ ,*Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների առաջին անգամ ընդունում:* Փոփոխությունը թույլ է տալիս դուստր կազմակերպությանը, որը նախընտրում է կիրառել ՀՀՄՍ 1-ի Դ16 (ա) պարբերությունը ֆինանսական հաշվետվություններում չափել իր ակտիվները և պարտավորությունները օգտագործելով այն հաշվեկշռային արժեքները, որոնք կներառվեն մայր կազմակերպության համախմբված ֆինանսական հաշվետվություններում, մայր կազմակերպության՝ ՀՀՄՍ-ներին անցնելու ամսաթվի հիման վրա: Այս փոփոխությունը նույնպես կիրառվում է ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկության նկատմամբ, որն ընտրում է կիրառել ՀՀՄՍ 1-ի Դ16 (ա) պարբերությունը:

Փոփոխությունն ուժի մեջ է մտնում 2022թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար և վաղաժամկետ կիրառումը թույլատրվում է:

ՀՀՄՍ 9 Ֆինանսական գործիքներ – Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման համար ,10 տոկոսե թեսթում ներառվող վճարներ

Որպես 2018-2020թթ. ՀՀՄՍ ստանդարտների տարեկան բարելավումների գործընթացի մաս, ՀՀՄՍ-ն թողարկել է ՀՀՄՍ 9-ի փոփոխությունները: Փոփոխությունները պարզաբանում են այն վճարները, որոնք կազմակերպությունը ներառում է գնահատելիս, թե արդյոք նոր կամ փոփոխված ֆինանսական պարտավորության պայմանները ըստ էության տարբեր են սկզբնական ֆինանսական պարտավորության պայմաններից: Այս վճարները ներառում են միայն նրանց, որոնք վճարվում կամ ստացվում են փոխառուի և փոխատուի միջև, ներառյալ երրորդ կողմի անունից փոխառուի կամ փոխատուի կողմից վճարված կամ ստացված վճարները: Կազմակերպությունը կիրառում է փոփոխությունը այն ֆինանսական պարտավորությունների նկատմամբ, որոնք փոփոխված կամ փոխանակված են՝ կազմակերպության կողմից փոփոխության առաջին անգամ կիրառման պահին սկսվող կամ դրան հաջորդող տարեկան ժամանակաշրջանների համար:

Փոփոխությունն ուժի մեջ է մտնում 2022թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար, սակայն վաղաժամկետ կիրառումը թույլատրվում է: Ընկերությունը կկիրառի փոփոխությունները այն ֆինանսական պարտավորությունների նկատմամբ, որոնք ձևափոխված կամ փոխանակված են կազմակերպության կողմից փոփոխության առաջին անգամ կիրառման սկսվող կամ դրան հաջորդող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար:

Ակնկալվում է, որ փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Ընկերության վրա:

5. Սեզնետային տեղեկատվություն

Ընկերության հիմնական գործունեությունն է մոլիբդենի խտանյութից ֆերոմոլիբդենի և եռակալած մետաղական մոլիբդենի արտադրությունը: 2015 թվականից առաջ և 2017 թվականի ընթացքում Ընկերությունը նաև արտադրել և վաճառել է իր սեփական ֆերոմոլիբդենը և եռակալած մետաղական մոլիբդենը: 2020 թվականի ընթացքում Ընկերությունը իր տարածքում նաև արտադրել և վաճառել է պղնձի օքսիդ:

Քանի որ ծառայությունների մատուցումը և արտադրանքի վաճառքը վերաբերում են մոլիբդենի խտանյութի մշակման միևնույն գործունեությանը, Ղեկավարությունը համարում է, որ Ընկերությունը կազմված է մեկ հաշվետու գործառնական սեզնետից: Ընկերության միակ գործառնական սեզնետի գործառնական արդյունքները պարբերաբար վերանայվում են Տնօրենների խորհրդի կողմից՝ սեզնետին միջոցների բաշխման վերաբերյալ որոշումներ կայացնելու և դրա գործունեությունը գնահատելու նպատակով:

2020 թվականին Ընկերության կապակցված կողմ հանդիսացող գործընկերոջը (Հայաստան) մատուցված մոլիբդենի խտանյութի մշակման ծառայություններից հասույթը կազմել է 6,452,383 հազար ՀՀ դրամ կամ ընդհանուր հասույթի 97.5%-ը (2019թ.՝ 8,727,131 հազար ՀՀ դրամ կամ ընդհանուր հասույթի 99.4%-ը): Ընկերության գործունեությունը հիմնականում կենտրոնացված է Հայաստանում: Ընկերությունը չունի ոչ ընթացիկ ակտիվներ Հայաստանից դուրս:

6. Հաճախորդների հետ գործարքներից հասույթ

<i>Մ000 ՀՀ դրամ</i>	<i>2020 թ.</i>	<i>2019 թ.</i>
Հասույթ մատուցված ծառայություններից (մոլիբդենի խտանյութի վերամշակում, Հայաստան)	6,452,383	8,727,131
Հասույթ վաճառված արտադրանքից (պղնձի օքսիդ, Շվեյցարիա)	127,419	–
Հասույթ մատուցված այլ ծառայություններից (Հայաստան)	40,356	49,791
	6,620,158	8,776,922

2015թ. սկսած Ընկերությունը աշխատում է կապակցված կողմի հետ կնքված խտանյութի վերամշակման պայմանագրի շրջանակներում, որի համաձայն՝ Ընկերությունը ստանում է մոլիբդենի խտանյութը և վերամշակում է այն ֆերոմոլիբդենի: Համաձայն պայմանագրի՝ Ընկերության միակ կատարման ենթակա պարտականությունն է մոլիբդենի վերամշակումը, և սույն ծառայության գինը ձևավորվում է վերամշակված խտանյութի քանակի հիման վրա:

7. Վաճառքի ինքնարժեք

<i>Մ000 ՀՀ դրամ</i>	<i>2020 թ.</i>	<i>2019 թ.</i>
Նյութեր	1,801,793	2,569,631
Աշխատավարձ	1,235,936	1,383,368
Մաշվածություն	592,363	565,042
Գազ	315,652	333,057
Ստացված ծառայություններ	182,783	167,721
Նորոգում և սպասարկում	135,431	140,246
Էլեկտրականություն	97,826	113,120
Ջուր	7,187	10,457
Այլ	–	719
	4,368,971	5,283,361

8. Վարչական ծախսեր

<i>Մ000 ՀՀ դրամ</i>	<i>2020 թ.</i>	<i>2019 թ.</i>
Աշխատավարձ	529,411	533,454
Մաշվածություն և ամորտիզացիա	71,848	70,727
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	33,386	34,008
Մասնագիտական ծառայություններ	26,821	82,926
Հարկեր, բացառությամբ շահութահարկի	17,555	37,610
Օժանդակ նյութեր	15,357	18,586
Բանկային ծախսեր	8,777	11,807
Գործուղման ծախսեր	5,550	18,744
Այլ	47,710	61,022
	756,415	868,884

9. Այլ գործառնական ծախսեր

<i>'000 ՀՀ դրամ</i>	<i>2020 թ.</i>	<i>2019 թ.</i>
Մաշվածություն	112,141	115,421
Նվիրատվություններ	93,635	63,603
Արտադրության պարապուրդի ծախսեր	69,290	3,041
Վնասված հիմնական միջոցների դուրսգրում	2,564	4,949
Վնասված պաշարների դուրսգրում	123	797
Տույժեր և տուգանքներ	48	2,132
Պաշարների արժեքի նվազեցում մինչև իրացման զուտ արժեք	–	151,668
Բնապահպանական վճար	–	16,614
Այլ	2,120	1,635
	279,921	359,860

10. Ֆինանսական եկամուտ

2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար ֆինանսական եկամուտը կազմել է 1,242,234 հազար ՀՀ դրամ (2019թ.՝ 995,018 հազար ՀՀ դրամ) և ներառում է բանկային ավանդներից, վերջնական մայր կազմակերպությանը տրված փոխառությունից, կապակցված կողմի՝ բաժնեմասի վաճառքի գծով դեբիտորական պարտքից և տրված կանխավճարից ստացված տոկոսային եկամուտները:

11. Շահութահարկի գծով ծախս**(ա) Շահույթում կամ վնասում ճանաչված գումարներ**

Ընկերությունը շահութահարկը վճարում է հայկական ընկերությունների համար կիրառելի 18% դրույթով 2020թ.

հունվարի 1-ից սկսած (2019թ.՝ 20%): Շահութահարկը 2019թ.-ին նվազել է երկու տոկոսով՝ 20%-ից 18%:

<i>'000 ՀՀ դրամ</i>	<i>2020 թ.</i>	<i>2019 թ.</i>
Ընթացիկ հարկի գծով ծախս		
Ընթացիկ տարվա ծախս	(365,771)	(896,350)
Նախորդ ժամանակաշրջանի շահութահարկի ճշգրտում	52,691	10,575
	(313,080)	(885,775)
Հետաձգված հարկի գծով ծախս		
Ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում	(285,740)	478,035
	(598,820)	(407,740)

Գործող հարկային դրույթի համադրում

<i>'000 ՀՀ դրամ</i>	<i>2020 թ.</i>	<i>2019 թ.</i>
Շահույթ նախքան հարկումը	3,194,207	3,001,328
Շահութահարկ՝ կիրառելի հարկային դրույթով	(574,957)	(600,266)
Նախորդ ժամանակաշրջանի շահութահարկի ճշգրտում	52,691	10,575
Ակտիվների հարկային բազայի ճշգրտում	(9,174)	121,341
Նախկինում չճանաչված ժամանակավոր տարբերությունների ճանաչում	–	55,149
Հարկային դրույթի փոփոխություններով պայմանավորված փոփոխություն	–	(552)
(Զնվազեցվող ծախսեր)/չհարկվող եկամուտներ	(67,380)	6,013
	(598,820)	(407,740)
Շահութահարկը արդյունավետ դրույթաչափով՝ 19% (2019թ.՝ 14%)		

11. Շահութահարկի գծով ծախս (շարունակություն)

(բ) Ժամանակավոր տարբերությունների շարժը տարվա ընթացքում

Ֆինանսական հաշվառման և հարկման նպատակներով կիրառվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների տարբերությունը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առաջացնում է զուտ հետաձգված հարկային պարտավորություններ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ զուտ հետաձգված հարկային ակտիվներ): Նվազեցվող ժամանակավոր տարբերությունները չեն մարվում՝ գործող հարկային օրենսդրությանը համաձայն:

2020 և 2019 թթ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների ընթացքում տեղի ունեցած ժամանակավոր տարբերությունների շարժը ներկայացված է ստորև.

'000 ՀՀ դրամ	Մնացորդը 2020թ հունվարի 1-ի դրությամբ	Շահույթում կամ վնասում ճանաչված	Մնացորդը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ասոցիացված կազմակերպությունում ներդրումներ	63,357	9,113	72,470
Հիմնական միջոցներ	(336,403)	17,778	(318,625)
Կանխավճարներ	702	(702)	–
Պաշարներ	61,180	(312)	60,868
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումների օտարումից դեբիտորական պարտքեր	168,046	(283,892)	(115,846)
Ժամկետային ավանդներ	3,535	(3,535)	–
Տրված փոխառություններ	3,817	(3,817)	–
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	381	192	573
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(83)	291	208
Կրեդիտորական պարտքեր	857	(857)	–
Պահուստներ	39,570	(19,999)	19,571
	4,959	(285,740)	(280,781)

'000 ՀՀ դրամ	Մնացորդը 2019թ հունվարի 1-ի դրությամբ	Շահույթում կամ վնասում ճանաչված՝ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող գործիքի օտարումից	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	Հարկային դրույթի բոլոր փոփոխություններ պայմանավորված փոփոխություն	Մնացորդը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումներ	(2,552,191)	–	132,270	2,419,921	–
Ասոցիացված կազմակերպությունում ներդրումներ	–	70,397	–	–	63,357
Հիմնական միջոցներ	(412,272)	38,491	–	–	(336,403)
Կանխավճարներ	(380)	1,160	–	–	702
Պաշարներ	42,630	25,348	–	–	61,180
Ոչ ընթացիկ դեբիտորական պարտքեր	–	37,343	149,375	–	168,046
Ժամկետային ավանդներ	5,752	(1,824)	–	–	3,535
Տրված փոխառություններ	1,485	2,756	–	–	3,817
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	315	108	–	–	381
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	117	(209)	–	–	(83)
Կրեդիտորական պարտքեր	–	952	–	–	857
Պահուստներ	21,547	22,420	–	–	39,570
	(2,892,997)	196,942	281,645	2,419,921	4,959

12. Հիմնական միջոցներ

'000 ՀՀ դրամ	Հող և շենքեր	Մեքենա- սարքա- վորումներ	Փոխադրա- միջոցներ	Տնտեսա- կան գույք	Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցներ	Ընդամենը
Սկզբնական արժեք						
2019թ. հունվարի 1-ի դրությամբ	3,105,929	4,989,486	195,517	269,281	307,032	8,867,245
Ավելացումներ	491,759	246,357	22,177	43,654	1,018,350	1,822,297
Օտարումներ և դուրսգրումներ	(719)	(38,977)	(5,172)	(4,968)	-	(49,836)
Տեղափոխումներ	78,449	66,735	-	30,117	(175,301)	-
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,675,418	5,263,601	212,522	338,084	1,150,081	10,639,706
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	3,675,418	5,263,601	212,522	338,084	1,150,081	10,639,706
Ավելացումներ	193,569	141,171	15,720	26,687	756,916	1,134,063
Օտարումներ և դուրսգրումներ	-	(7,726)	(10,166)	(2,023)	-	(19,915)
Տեղափոխումներ	24,424	85,544	-	90	(110,058)	-
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,893,411	5,482,590	218,076	362,838	1,796,939	11,753,854
Մաշվածություն						
2019թ. հունվարի 1-ի դրությամբ	(456,900)	(1,671,860)	(113,517)	(73,380)	-	(2,315,657)
Տարվա մաշվածության ծախս	(167,771)	(496,752)	(31,055)	(53,902)	-	(749,480)
Օտարումներ և դուրսգրումներ	370	35,055	4,068	2,797	-	42,290
Տեղափոխումներ	826	312	-	(1,138)	-	-
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(623,475)	(2,133,245)	(140,504)	(125,623)	-	(3,022,847)
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	(623,475)	(2,133,245)	(140,504)	(125,623)	-	(3,022,847)
Տարվա մաշվածության ծախս	(170,936)	(516,487)	(30,088)	(59,455)	-	(776,966)
Օտարումներ և դուրսգրումներ	-	5,196	8,974	1,645	-	15,815
Տեղափոխումներ	-	-	-	-	-	-
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(794,411)	(2,644,536)	(161,618)	(183,433)	-	(3,783,998)
Հաշվեկշռային արժեք						
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,051,943	3,130,356	72,018	212,461	1,150,081	7,616,859
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,099,000	2,838,054	56,458	179,405	1,796,939	7,969,856

Մաշվածության ծախս

2020թ. ընթացքում 592,363 հազար ՀՀ դրամ (2019թ.՝ 565,042 հազար ՀՀ դրամ) գումարով մաշվածության ծախսը ճանաչվել է վաճառքի ինքնարժեքի կազմում, 71,188 հազար ՀՀ դրամ (2019թ.՝ 70,072 հազար ՀՀ դրամ) գումարով՝ վարչական ծախսերում, 112,141 հազար ՀՀ դրամ (2019թ.՝ 115,421 հազար ՀՀ դրամ) գումարով՝ այլ գործառնական ծախսերում: 1,274 հազար ՀՀ դրամ մաշվածության ծախսը պաշարներից ծախսագրվել է ինքնարժեք (2019թ.՝ 1,055 հազար ՀՀ դրամ): Վարչական ծախսերում ներառված 660 հազար ՀՀ դրամը ներկայացնում է ոչ նյութական ակտիվների ամորտիզացիայի ծախսը (2019թ.՝ 655 հազար ՀՀ դրամ):

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ամբողջությամբ մաշված հիմնական միջոցների համախառն հաշվեկշռային արժեքը կազմել է 793,825 հազար ՀՀ դրամ (2019թ.՝ 560,644 հազար ՀՀ դրամ):

2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ընթացիկ դատական գործի հայցով և դատարանի որոշմամբ Ընկերության գույքի վրա դրված է արգելանք 161,056 հազ. ՀՀ դրամ պահանջվող փոխհատուցման չափով:

13. Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումներ

'000 ՀՀ դրամ	2020 թ.	2019 թ.
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումներ		
«Մետաղագործ» ՓԲԸ	5,000	5,000
	5,000	5,000

«Մետաղագործ» ՓԲԸ

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության բաժնեմասը «Մետաղագործ» ՓԲԸ-ի կապիտալում կազմում է 15.94% (2019թ.՝ 15.94%):

13. Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումներ (շարունակություն)

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի (ԶՊՄԿ) կապիտալում ուներ 15% բաժնեմաս: ԶՊՄԿ-ն հանդիսանում է Ընկերության կապակցված կողմ, և բաժնետոմսերը հիմնականում ձեռք են բերվել ԶՊՄԿ-ի սեփականաշնորհման ընթացքում: Բաժնետոմսերը ցուցակված չէին:

2019թ. ընթացքում ԶՊՄԿ-ն հետ է գնել իր՝ Ընկերության կողմից տիրապետվող բաժնետոմսերը:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներդրման օտարումից ստացվելիք գումարի մնացորդը կազմում է 14,563,587 հազար ՀՀ դրամ (2019թ.՝ 13,049,965 հազար ՀՀ դրամ) (Ծանոթագրություն 17): ԶՊՄԿ-ն տրամադրել է սեփական բաժնետոմսերը որպես դեբիտորական պարտքի երաշխավորություն:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2019թ. տարեսկզբի և տարեվերջի դրությամբ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող բաժնային արժեթղթերի մնացորդների համադրումը.

<i>'000 ՀՀ դրամ</i>	<i>2019 թ.</i>
Մնացորդը առ 1 հունվարի	27,263,969
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ներառված կորուստ	
- իրական արժեքի փոփոխություն	(12,099,605)
Օտարում	(15,164,364)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	-

14. Ասոցիացված կազմակերպությունում ներդրումներ

<i>'000 ՀՀ դրամ</i>	<i>2020 թ.</i>	<i>2019 թ.</i>
«Հին Արենի» ՓԲԸ	175,652	226,279
	175,652	226,279

«Հին Արենի» ՓԲԸ

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության բաժնեմասը «Հին Արենի» ՓԲԸ-ի կապիտալում կազմում է 23.6% (2019թ.՝ 23.6%): «Հին Արենի» ՓԲԸ-ն զբաղվում է գինու արտադրությամբ Հայաստանում: 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը որոշել է, որ առկա է ասոցիացված կազմակերպությունում կատարված ներդրման արժեզրկման վկայություն: 2020թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ասոցիացված կազմակերպությունում կատարված ներդրման՝ որպես առանձին դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը որոշվել է զեղչված դրամական հոսքերի մեթոդով՝ կիրառելով 10.8% զեղչման դրույք (2019թ.՝ 11.8%) և վերահսկողության բացակայությամբ պայմանավորված 23.1% զեղչ (2019թ.՝ 20.6%): Արդյունքում Ընկերությունը ճանաչել է ասոցիացված կազմակերպությունում ներդրման արժեզրկումից կորուստ՝ 50,318 հազար ՀՀ դրամի չափով (2019թ.՝ 50,518 հազար ՀՀ դրամ):

Ստորև ներկայացված է ասոցիացված կազմակերպությունում կատարված ներդրման հաշվեկշռային արժեքի փոփոխությունների վերլուծությունը.

<i>'000 ՀՀ դրամ</i>	<i>2020 թ.</i>	<i>2019 թ.</i>
Մնացորդն առ 1 հունվարի	226,279	271,976
Ընկերության բաժնեմասը տարվա (վնասում)/շահույթում	(309)	4,821
Ասոցիացված կազմակերպությունում ներդրման արժեզրկումից կորուստ	(50,318)	(50,518)
Մնացորդն առ 31 դեկտեմբերի	175,652	226,279

14. Ասոցիացված կազմակերպությունում ներդրումներ (շարունակություն)**«Հին Արենի» ՓԲԸ (շարունակություն)**

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է «Հին Արենի» ՓԲԸ -ում ներդրման ամփոփ ֆինանսական տեղեկատվությունը.

<i>‘000 ՀՀ դրամ</i>	<i>2020 թ.</i>	<i>2019 թ.</i>
Ոչ ընթացիկ ակտիվներ	601,706	731,389
Ընթացիկ ակտիվներ	416,380	518,916
Ընթացիկ պարտավորություններ	(62,031)	(79,211)
Սեփական կապիտալ	956,055	1,171,094
Ընկերության բաժնեմասը զուտ ակտիվներում	225,970	276,797
Ասոցիացված կազմակերպությունում ներդրման արժեզրկումից կորուստ	(50,318)	(50,518)
Ասոցիացված կազմակերպությունում ներդրման հաշվեկշռային արժեքը	175,652	226,279
Հասույթ	114,812	193,812
Վաճառքի ինքնարժեք	(57,755)	(97,411)
Վարչական ծախսեր	(60,101)	(83,634)
Այլ գործառնական գործունեությունից արդյունք	1,505	12,745
Զուտ ֆինանսական եկամուտ/(ծախս)	232	(14)
(Վնաս)/շահույթ մինչև հարկումը	(1,307)	25,498
Ընկերության բաժնեմասը տարվա (վնասում)/շահույթում	(309)	4,821

15. Կանխավճարներ

<i>‘000 ՀՀ դրամ</i>	<i>2020 թ.</i>	<i>2019 թ.</i>
Ոչ ընթացիկ կանխավճարներ		
Մոլիբդենի խտանյութ գնելու համար տրված կանխավճարներ	–	9,678,800
Կանխավճարներ հիմնական միջոցների գծով	192,432	176,661
	192,432	9,855,461
Ընթացիկ կանխավճարներ		
Մոլիբդենի խտանյութ գնելու համար տրված կանխավճարներ	9,678,800	–
Կանխավճարներ նյութեր ձեռք բերելու համար	42,342	91,142
Կանխավճարներ ծառայությունների դիմաց	24,413	27,657
Այլ կանխավճարներ	5,374	10,345
	9,750,929	129,144

Մոլիբդենի խտանյութի համար ոչ ընթացիկ կանխավճարները տրվել են կապակցված կողմին: Մատակարարման պայմանագրի համաձայն՝ խտանյութը պետք է մատակարարվի 2020-2021թթ. ընկած ժամանակահատվածում: Տոկոսները գանձվում են մնացորդի գծով նախքան մատակարարումը՝ մեկ ամսվա Libor գումարած 4.95% տոկոսադրույթով: 2020թ. ընթացքում վճարվել են 564,835 հազար ՀՀ դրամի չափով հաշվեզրկված տոկոսները (2019թ.՝ 708,431 հազար ՀՀ դրամ):

16. Պաշարներ

<i>‘000 ՀՀ դրամ</i>	<i>2020 թ.</i>	<i>2019 թ.</i>
Հումք և սպառողական նյութեր՝ ինքնարժեքով	504,723	576,623
Պահեստամասեր՝ ինքնարժեքով	96,206	57,601
Շինարարական նյութեր՝ ինքնարժեքով	11,211	36,981
Անավարտ արտադրանք՝ ինքնարժեքով	11,211	10,193
Պատրաստի արտադրանք՝ ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից	16,633	2,752
նվազագույնով	80,860	73,377
Այլ		
	720,844	757,527

2020թ.-ին անորակ պաշարների արժեքի նվազեցում մինչև իրացման զուտ արժեքը տեղի չի ունեցել: 2019 թ. ընթացքում անորակ պաշարների արժեքի նվազեցումը մինչև իրացման զուտ արժեքը 151,668 հազար ՀՀ դրամի չափով ծախս է ճանաչվել:

17. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

<i>'000 ՀՀ դրամ</i>	<i>2020 թ.</i>	<i>2019 թ.</i>
Ոչ ընթացիկ		
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումների օտարումից դեբիտորական պարտքեր	–	13,240,513
Ակնկալվող վարկային կորուստների պահուստ	–	(190,548)
	–	13,049,965
Ընթացիկ		
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումների օտարումից դեբիտորական պարտքեր	14,890,509	–
Առևտրային դեբիտորական պարտքեր	1,072,963	1,239,705
Ստացվելիք տոկոսներ	45,944	55,009
	16,009,416	1,294,714
Ակնկալվող վարկային կորուստների պահուստ	(330,098)	(2,111)
	15,679,318	1,292,603

2020 և 2019թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չի ունեցել արժեզրկված կամ ժամկետանց առևտրային դեբիտորական պարտքեր: Ընթացիկ առևտրային և այլ դեբիտորական պարտքերը տոկոսային չեն և հիմնականում մարվում են 30-90 օրերի ընթացքում:

Ներդրումների օտարումից դեբիտորական պարտքերը պետք է մարվեն մեկ տարի ժամկետում:

18. Ժամկետային ավանդներ

<i>'000 ՀՀ դրամ</i>	<i>2020 թ.</i>	<i>2019 թ.</i>
Ոչ ընթացիկ ավանդներ		
2 խոշորագույն հայկական բանկեր	–	4,837,822
	–	4,837,822
Ակնկալվող վարկային կորուստների պահուստ	–	(19,639)
	–	4,818,183

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը ուներ ընթացիկ ավանդներ՝ տարեկան 5%, 4.9% և 4.5% պայմանագրային տոկոսադրույքներով: Ավանդային պայմանագրերը կնքվել էին 2018 և 2019թթ. ընթացքում հայկական բանկերից երկուսի հետ և մարվել 2020թ. ընթացքում:

19. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

<i>'000 ՀՀ դրամ</i>	<i>2020 թ.</i>	<i>2019 թ.</i>
Բանկային հաշիվների մնացորդներ	692,863	276,862
Ցպահանջ ավանդներ	1,515,091	1,000,000
Կանխիկ դրամարկղում	379	26
Դրամական միջոցները և դրանց համարժեքները դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում	2,208,333	1,276,888
Ակնկալվող վարկային կորուստների պահուստ	(1,159)	(132)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	2,207,174	1,276,756

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը հայկական խոշոր բանկերից երկուսում ունի ՀՀ դրամով ավանդներ՝ մինչև երկու ամիս մարման ժամկետով և տարեկան 6.2% և 6.5% պայմանագրային տոկոսադրույքներով:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը հայկական բանկերից մեկում ուներ ՀՀ դրամով ավանդներ՝ մինչև երկու ամիս մարման ժամկետով և տարեկան 5.5% պայմանագրային տոկոսադրույքով:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը ունի հասանելի չօգտագործված վարկային գիծ 500,000 հազար ՀՀ դրամի չափով (2019թ.՝ 250,000 հազար ՀՀ դրամ) հայկական խոշորագույն բանկերից մեկում:

20. Ակնկալվող վարկային կորուստների պահուստ

Ստորև նկարագրված է ակնկալվող վարկային կորուստների պահուստի շարժը.

<i>‘000 ՀՀ դրամ</i>	<i>Տրված փոխառություններ</i>	<i>Ժամկետային ավանդներ</i>	<i>Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ</i>	<i>Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր</i>	<i>Ընդամենը</i>
2019թ. հունվարի 1-ի դրությամբ	7,429	28,761	589	1,571	38,350
Նոր ձևավորված ակտիվներ	21,210	–	–	192,659	213,869
Մարում	(7,429)	(9,122)	(457)	(1,571)	(18,579)
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	21,210	19,639	132	192,659	233,640
Նոր ձևավորված ակտիվներ	–	–	1,159	3,176	4,335
Ակնկալվող վարկային կորուստների պահուստի վերազնահատում	–	–	–	136,374	136,374
Մարում	(21,210)	(19,639)	(132)	(2,111)	(43,092)
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	–	–	1,159	330,098	331,257

2020թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ակնկալվող վարկային կորուստների չափման նպատակով բոլոր ֆինանսական ակտիվները դասակարգվել են Փուլ 1-ում և Փուլ 2-ում (2019թ. Փուլ 1): 2020թ. ընթացքում ներդրումների օտարումից դեբիտորական պարտքերը փոխանցվել են Փուլ 1–ից Փուլ 2: Ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումից ի վեր նշված ֆինանսական գործիքի պարտքային ռիսկի էական ավելացում է տեղի ունեցել:

21. Կապիտալ և պահուստներ

(ա) Բաժնետիրական կապիտալ

<i>Բաժնետոմսերի քանակը, եթե այլ տեղեկատվություն նշված չէ</i>	<i>Սովորական բաժնետոմսեր</i>	
	<i>2020 թ.</i>	<i>2019 թ.</i>
Հայտարարված բաժնետոմսեր	69,093	69,093
Անվանական արժեք	ՀՀ 10,000 դրամ	ՀՀ 10,000 դրամ
Հունվարի 1-ի և դեկտեմբերի 31-ի դրությամբ թողարկված, ամբողջովին վճարված	69,093	69,093

2020 և 2019թթ. դեկտեմբերի դրությամբ Ընկերության բաժնետիրական կապիտալը կազմել է 690,930 հազար ՀՀ դրամ: Բոլոր մնացած պահուստները այնպիսին են, ինչպես նշված է սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունում:

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժինները և քվեարկել Ընկերության բաժնետերերի ժողովներում՝ մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն սկզբունքով:

(բ) Շահաբաժիններ

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ Ընկերության բաշխման ենթակա պահուստները սահմանափակվում են Ընկերության ՖՀՄՍ-ների համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվություններում գրանցված չբաշխված շահույթի մնացորդով:

2020թ. ընթացքում 12,000,072 հազար ՀՀ դրամի շահաբաժիններ են հայտարարվել (2019թ.՝ 1,043,304 հազար ՀՀ դրամ): Մեկ բաժնետոմսին ընկնող շահաբաժինը կազմել է 173.7 հազար ՀՀ դրամ (2019թ.՝ 15.1 հազար ՀՀ դրամ):

(գ) Կապիտալի կառավարում

Ընկերությունը չունի կապիտալի կառավարման ձևակերպված քաղաքականություն, սակայն ղեկավարությունը ձգտում է ապահովել կապիտալի բավարար բազա՝ Ընկերության գործառնական և ռազմավարական պահանջները բավարարելու համար: Դա իրագործվում է դրամական միջոցների արդյունավետ կառավարման, Ընկերության հասույթի և շահույթի շարունակական վերահսկման ու հիմնականում Ընկերության գործառնական գործունեության դրամական միջոցների հոսքերով ֆինանսավորվող երկարաժամկետ ներդրումային ծրագրերի միջոցով: Ձեռնարկելով այս քայլերը՝ Ընկերությունը շահույթի կայուն աճի նպատակ ունի:

Տարվա ընթացքում կապիտալի կառավարման նկատմամբ կիրառվող Ընկերության մոտեցումը չի փոփոխվել: Ընկերության նկատմամբ կիրառելի չեն կապիտալի հետ կապված արտաքին պահանջներ:

22. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

<i>'000 ՀՀ դրամ</i>	<i>2020 թ.</i>	<i>2019 թ.</i>
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի գծով	86,754	14,964
Կրեդիտորական պարտքեր կոմունալ վճարների գծով	58,388	51,024
Կրեդիտորական պարտքեր հիմնական միջոցի ձեռքբերման գծով	45,443	40,743
Կրեդիտորական պարտքեր հումքի ձեռքբերման գծով	36,469	21,799
Կրեդիտորական պարտքեր ստացված թրծման ծառայությունների գծով	–	18,770
Այլ	15,896	16,569
	242,950	163,869

23. Իրական արժեք և ռիսկերի կառավարում**(ա) Իրական արժեք**

Ղեկավարությունը գտնում է, որ Ընկերության դրամական միջոցների և կարճաժամկետ ավանդների, դեբիտորական պարտքերի, կրեդիտորական պարտքերի և այլ ընթացիկ պարտավորությունների իրական արժեքները մոտավորապես համապատասխանում են վերջիններիս հաշվեկշռային արժեքներին, ինչը հիմնականում պայմանավորված է այս գործիքների կարճաժամկետ բնույթով: Ստորև բերված աղյուսակները ներկայացնում են Ընկերության ակտիվների իրական արժեքի չափման հիերարխիան:

Իրական արժեքի չափման հիերարխիան 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝

<i>'000 ՀՀ դրամ</i>	<i>Իրական արժեքի չափումը օգտագործելով էական ոչ դիտարկելի եւակետային տվյալներ (3-րդ մակարդակ)</i>	<i>Ընդամենը</i>
Ակտիվներ, որոնց համար իրական արժեքները բացահայտված են		
Ներդրումների օտարումից դեբիտորական պարտքեր	14,563,587	14,563,587

Իրական արժեքի չափման հիերարխիան 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝

<i>'000 ՀՀ դրամ</i>	<i>Իրական արժեքի չափումը օգտագործելով էական ոչ դիտարկելի եւակետային տվյալներ (3-րդ մակարդակ)</i>	<i>Ընդամենը</i>
Ակտիվներ, որոնց համար իրական արժեքները բացահայտված են		
Ներդրումների օտարումից դեբիտորական պարտքեր	13,049,965	13,049,965
Ժամկետային ավանդներ	4,813,363	4,813,363
Տրված փոխառություններ	2,416,484	2,416,484

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս 2020թ. այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով իրական արժեքով ներդրումների վաճառքից դեբիտորական պարտքերի մնացորդների համադրումը.

<i>'000 ՀՀ դրամ</i>	<i>2020 թ.</i>	<i>2019 թ.</i>
Մնացորդը առ 1 հունվարի	13,240,513	–
Նոր ձևավորված ակտիվներ	–	13,236,966
Արտարժույթի փոխարկումից զուտ օգուտ	1,211,703	–
Հաշվեգրված տոկոսներ	438,293	3,547
Ակնկալվող վարկային կորուստների պահուստ	(326,922)	(190,548)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	14,563,587	13,049,965

Իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակ դասված՝ Ընկերության տրված փոխառությունների, ժամկետային ավանդների և ներդրումների օտարումից դեբիտորական պարտքերի իրական արժեքի չափման համար կիրառված էական ոչ դիտարկելի եւակետային տվյալները և քանակային զգայունության վերլուծությունը՝ 2020 և 2019թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ներկայացված են ստորև.

23. Իրական արժեք և ռիսկերի կառավարում (շարունակություն)

(ա) Իրական արժեք (շարունակություն)

	Չափման եղանակ	Էական ոչ դիտարկելի ելակետային տվյալներ	Միջակայք	Ելակետային տվյալների զգալունությունը իրական արժեքի նկատմամբ
Ժամկետային ավանդներ	Ձեռչված դրամական միջոցների հոսքեր	Շուկայական տոկոսադրույքը	2019թ.՝ 5.57%	1% աճը/(նվազումը) կհանգեցնի իրական արժեքի 29,607 հազար ՀՀ դրամով (նվազման)/աճի
Տրված փոխառություններ	Ձեռչված դրամական միջոցների հոսքեր	Շուկայական տոկոսադրույքը	2019թ.՝ 1.41%	1% աճը/(նվազումը) կհանգեցնի իրական արժեքի 11,109 հազար ՀՀ դրամով (նվազման)/աճի
Ներդրումների օտարումից դեբիտորական պարտքեր	Ձեռչված դրամական միջոցների հոսքեր	Շուկայական տոկոսադրույքը	2020թ.՝ 4.89% 2019թ.՝ 4.89%	1% (2019 թ.՝ 1%) աճը/(նվազումը) կհանգեցնի իրական արժեքի 64,913 հազար ՀՀ դրամով (նվազման)/աճի (2019 թ.՝ 142,134 հազար ՀՀ դրամով)

(բ) Ֆինանսական ռիսկերի կառավարում

Ֆինանսական գործիքներն օգտագործելիս՝ Ընկերությունը ենթարկվում է հետևյալ ռիսկերին.

- ▶ պարտքային ռիսկ,
- ▶ իրացվելիության ռիսկ,
- ▶ շուկայական ռիսկ:

i. Ռիսկերի կառավարման հիմունքներ

Դեկավարությունը պատասխանատվություն է կրում Ընկերության ռիսկերի կառավարման համակարգի մշակման և վերահսկողության համար:

Ընկերության ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել և վերլուծել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Ընկերությունը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և համակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների ու Ընկերության գործունեության փոփոխությունների արտացոլման նպատակով: Դասընթացների, կառավարման ստանդարտների և ընթացակարգերի միջոցով Ընկերությունը նպատակ ունի ձևավորել վերահսկման կանոնակարգված ու կառուցողական միջավայր, որտեղ բոլոր աշխատակիցները հստակ պատկերացում կունենան իրենց դերի և պարտականությունների մասին:

ii. Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ պատվիրատուն կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պայմանագրային պարտականությունները: Ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը ներկայացնում է պարտքային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը:

Առևտրային դեբիտորական պարտքեր

Ընկերության հասույթի գերակշռող մասը վերագրելի է մեկ կապակցված կողմին մատուցվող ծառայության մատուցման գործարքներին: Պատմականորեն Ընկերությունը վնաս չի կրել այդ կողմի հետ իրականացված գործարքներից: Ընկերությունը չի պահանջում գրավ առևտրային դեբիտորական պարտքերի գծով: Ներդրման օտարումից դեբիտորական պարտքերն ապահովված են գրավադրված բաժնետոմսերով:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ և ժամկետային ավանդներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները և ժամկետային ավանդները պահվում են հեղինակավոր հայկական բանկերում, և Ընկերությունը չի ակնկալում, որ այդ բանկերը չեն կատարի իրենց պարտականությունները:

23. Իրական արժեք և ռիսկերի կառավարում (շարունակություն)**(բ) Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)***Տրված փոխառություններ*

Ընկերության քաղաքականության համաձայն՝ փոխառությունները տրամադրվում են միայն կապակցված կողմերին, և այդ փոխառությունների գծով գրավ չի պահանջվում: Տրամադրված փոխառությունները ժամկետանց չեն, և ղեկավարությունն ակնկալում է, որ գումարները կմարվեն:

iii. Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Ընկերությունը կարող է ունենալ դժվարություններ իր ֆինանսական պարտավորությունների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնց մարումը պահանջում է դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի տրամադրում: Իրացվելիության ռիսկի կառավարման հարցում Ընկերության մոտեցումն է հնարավորինս ապահովել բավարար իրացվելիություն՝ բնականոն և արտակարգ իրավիճակներում պարտավորությունները կատարելու համար՝ առանց անընդունելի կորուստներ կրելու կամ Ընկերության հեղինակություն վտանգելու:

Ենթարկվածությունն իրացվելիության ռիսկին

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների պայմանագրային ժամկետայնությունը հաշվետու ամսաթվի դրությամբ: Աղյուսակներում ներկայացված են համախառն և չզեղչված գումարները, որոնք ներառում են գնահատված տոկոսների վճարումները՝ առանց հաշվանցման համաձայնագրերի ազդեցության:

Չի ակնկալվում, որ ժամկետայնության վերլուծությունում ներառված դրամական միջոցների հոսքերը կարող են առաջանալ շատ ավելի վաղ ժամկետներում կամ շատ ավելի տարբեր գումարների չափով:

'000 ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2020թ.			
	Հաշվեկշռային արժեք	Դրամական միջոցների պայմանագրային հոսքեր	Մինչև 2 ամիս	Մինչև 1 տարի
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	242,950	242,950	242,950	–
Շահաբաժինների գծով կրեդիտորական պարտքեր	5,242,516	5,242,516	–	5,242,516
	5,485,466	5,485,466	242,950	5,242,516

'000 ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019թ.			
	Հաշվեկշռային արժեք	Դրամական միջոցների պայմանագրային հոսքեր	Մինչև 2 ամիս	Մինչև 1 տարի
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	163,869	163,869	163,869	–
	163,869	163,869	163,869	–

iv. Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը Ընկերության եկամուտների կամ վերջինիս ֆինանսական գործիքների արժեքի փոփոխության ռիսկն է շուկայական գների, այդ թվում՝ արտարժույթի փոխարժեքների, տոկոսադրույքների և բաժնետոմսերի գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Արտարժույթի ռիսկ

Ընկերությունը ենթարկվում է արտարժույթի ռիսկին այնքանով, որքանով չեն համապատասխանում Ընկերության ֆունկցիոնալ արժույթը և այն արժույթները, որոնցով արտահայտված են զնումները, ավանդները, դրամական միջոցները և դրանց համարժեքները և տրված փոխառությունները: Այս գործարքները հիմնականում արտահայտված են ԱՄՆ դոլարով:

23. Իրական արժեք և ռիսկերի կառավարում (շարունակություն)**(բ) Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)***Զգայունության վերլուծություն*

Դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի հնարավոր արժևորումը (արժեզրկումը) ԱՄՆ դոլարի նկատմամբ կազդեր արտարժույթով արտահայտված ֆինանսական գործիքների չափման և շահույթի կամ վնասի վրա ստորև ներկայացված գումարների չափով: Վերլուծությունն իրականացնելիս ենթադրվում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ և հաշվի չի առնվում կանխատեսվող վաճառքների և գնումների ազդեցությունը:

<i>'000 ՀՀ դրամ</i>	<i>Արժևորում</i>	<i>Արժեզրկում</i>
	<i>Շահույթ կամ վնաս</i>	<i>Շահույթ կամ վնաս</i>
31 դեկտեմբերի 2020թ.		
ՀՀ դրամի փոխարժեքի 5% փոփոխություն ԱՄՆ դոլարի նկատմամբ	(480,312)	480,312
31 դեկտեմբերի 2019թ.		
ՀՀ դրամի փոխարժեքի 3% փոփոխություն ԱՄՆ դոլարի նկատմամբ	(606,851)	606,851

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը շուկայական տոկոսադրույքի փոփոխման հետևանքով ֆինանսական գործիքների ապագա դրամային հոսքերի իրական արժեքի տատանման ռիսկն է: 2019թ.-ին Ընկերությունը տրված փոխառության լողացող տոկոսադրույքի գծով ենթարկվել է տոկոսադրույքի ռիսկին: 2020թ.-ին Ընկերությունը չի ենթարկվել տոկոսադրույքի ռիսկին:

<i>'000 ՀՀ դրամ</i>	<i>Արժևորում/</i> <i>Արժեզրկում</i>
	<i>Շահույթ կամ վնաս</i>
31 դեկտեմբերի 2019թ.	
0.35%-ի չափով 3 ամսյա դոլարային Libor տոկոսադրույքի աճ	8,325
0.35%-ի չափով 3 ամսյա դոլարային Libor տոկոսադրույքի նվազում	(8,325)

24. Պայմանական պարտավորություններ**(ա) Ապահովագրություն**

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Ընկերությունը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր բոլոր շենքերի և սարքավորումների համար, ինչպես նաև ապահովագրված չէ գործունեության ընդհատումից և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորություններից, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց՝ Ընկերության տարածքում տեղի ունեցած պատահարների կամ գործունեության հետևանքով: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է զգալի անբարենպաստ ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

(բ) Շրջակա միջավայրի պահպանություն

Ընկերության գործունեությունը կարգավորվում է բազմաթիվ պետական օրենքներով և կանոնակարգերով, որոնք կառավարում են օդը և ջուրն աղտոտող նյութերի արտանետումը, թափոնների արտադրությունը, գործածումը և պահպանումը: Ղեկավարությունը գտնում է, որ Ընկերությունը բավարարել է շրջակա միջավայրի պահպանության հետ կապված կառավարության պահանջները, այդ իսկ պատճառով, Ընկերությունը պահուստ չի ձևավորել շրջակա միջավայրի պահպանության գծով հնարավոր պարտավորությունների համար, քանի որ ղեկավարությունը հավանական չի համարում նման պայմանական պարտավորությունների առաջացումը մոտ ապագայում: Այնուամենայնիվ, բնապահպանության հարցերը կարգավորող ՀՀ օրենսդրությունը զարգացման փուլում է, և այդ օրենսդրության ու վերջինիս մեկնաբանությունների հնարավոր փոփոխությունները կարող են էական պարտավորություններ առաջացնել ապագայում:

24. Պայմանական պարտավորություններ (շարունակություն)**(գ) Հարկային պարտավորվածություններ**

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրությամբ, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և տարբեր կերպ են մեկնաբանվում տարբեր հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում, հարկային մարմիններն իրավասու չեն սահմանել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են այլ երկրների համեմատությամբ ավելի մեծ և էական հարկային ռիսկ առաջացնել: Ղեկավարությունը գտնում է, որ պատշաճ կերպով է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի գործող հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են լինել էական այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

2020 թ. ընթացքում ցուցակված տնտեսվարող սուբյեկտների հարկման պահանջները փոփոխվել են: Հայաստանում տեղի ունեցած վերջին իրադարձությունները ենթադրում են, որ հարկային մարմիններն ավելի խիստ մոտեցում կարող են ցուցաբերել հարկային օրենսդրության և հաշվարկների մեկնաբանության և կիրառման հարցում: Հետևաբար, հնարավոր է, որ ապագայում ցանկացած պահի ընկերության իրականացրած գործարքները և գործունեությունը կարող են վիճարկվել: Արդյունքում, համապատասխան հարկային մարմինները կարող են գնահատել լրացուցիչ հարկեր, տույժեր և տուկոսներ, որոնց ազդեցությունը ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա կարող է էական լինել՝ չգերազանցելով 319 մլն ՀՀ դրամը:

2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ղեկավարությունը կարծում է, որ համապատասխան հարկային օրենսդրության իր մեկնաբանությունը տեղին է՝ հաշվի առնելով վերը նշված ռիսկը և որ ընկերության հարկային դիրքը կպահպանվի:

25. Ֆինանսավորման գործունեության արդյունքում առաջացող պարտավորությունների փոփոխություն

	<i>Բանկային օվերդրաֆտ</i>
Հաշվեկշռային արժեք 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	–
Մուտքեր ձեռքբերումից	50,000
Մարում	(50,062)
Հաշվեգրված տոկոս	62
Հաշվեկշռային արժեք 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	–

Ընկերությունը վճարված տոկոսագումարները դասակարգում է որպես ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսք:

26. Կապակցված կողմեր**(ա) Վերահսկողություն**

Ընկերության անմիջական մայր կազմակերպությունն է հանդիսանում «Քրոնիմետ Ֆերրոլեզ» ՍՊԸ-ն (Գերմանիա): Ընկերության վերջնական մայր կազմակերպությունն է «Քրոնիմետ Հոլդինգ» ՍՊԸ-ն, որը վերահսկվում է Գյունտեր Պիլարսկու և իր ընտանիքի կողմից:

(բ) Գործարքներ առանցքային ղեկավար անձնակազմի հետ

Դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար առանցքային ղեկավար անձնակազմի վարձատրությունը ներկայացված է ստորև.

<i>’000 ՀՀ դրամ</i>	<i>2020 թ.</i>	<i>2019 թ.</i>
Աշխատավարձ և պարգևատրումներ, ներառյալ հարկերը	212,888	196,741

26. Կապակցված կողմեր (շարունակություն)**(գ) Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ**

'000 ՀՀ դրամ	<i>Գործարքի գումարը</i>		<i>Մնացորդն առ</i>	
	<i>2020 թ.</i>	<i>2019 թ.</i>	<i>31 դեկտեմբերի 2020թ.</i>	<i>31 դեկտեմբերի 2019թ.</i>
Արտադրանքի և ծառայությունների վաճառք				
Ղեկավարության/Պիլարսկի ընտանիքի ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններ	6,492,739	8,776,922	1,069,787	1,237,594
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող բաժնային գործիքների օտարում				
Ղեկավարության/Պիլարսկի ընտանիքի ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններ	–	15,164,364	14,563,587	13,049,965
Նյութերի և ծառայությունների ձեռքբերում				
Վերջնական մայր կազմակերպություն	6,966	7,300	1,508	1,832
Ղեկավարության/Պիլարսկի ընտանիքի ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններ	–	–	9,678,800	9,678,800
Ղեկավարության ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններ	130,438	161,811	–	18,801

Նյութերի ձեռքբերման գործարքների մնացորդները վերաբերում են մոլիբդենի խտանյութի գնման համար տրված կանխավճարներին: Մատակարարման պայմանագրի համաձայն՝ խտանյութը պետք է մատակարարվի մինչև 2021թ. ավարտը: Տոկոսները գանձվում են մնացորդի գծով նախքան մատակարարումը՝ մեկ ամսվա Libor գումարած 4.95% տոկոսադրույքով: 2020թ. ընթացքում մնացորդի գծով հաշվեգրված տոկոսային եկամուտը կազմել է 555,770 հազար ՀՀ դրամ (2019թ.՝ 702,628 հազար ՀՀ դրամ):

Ներդրումների օտարումից դեբիտորական պարտքերը պետք է մարվեն մինչև 2021թ. ավարտը: 2020թ. ընթացքում մնացորդի գծով հաշվեգրված տոկոսային եկամուտը կազմել է 438,293 հազար ՀՀ դրամ (2019թ.՝ 3,547 հազար ՀՀ դրամ):

'000 ՀՀ դրամ	<i>Տոկոսային եկամուտ</i>		<i>Մնացորդն առ</i>	
	<i>2020 թ.</i>	<i>2019 թ.</i>	<i>31 դեկտեմբերի 2020թ.</i>	<i>31 դեկտեմբերի 2019թ.</i>
Տրված վարկեր				
Վերջնական մայր կազմակերպություն	31,739	15,357	–	2,378,611

'000 ՀՀ դրամ	<i>Հայտարարված շահաբաժիններ</i>		<i>Մնացորդն առ</i>	
	<i>2020 թ.</i>	<i>2019 թ.</i>	<i>31 դեկտեմբերի 2020թ.</i>	<i>31 դեկտեմբերի 2019թ.</i>
Շահաբաժինների գծով կրեդիտորական պարտքեր				
Մայր կազմակերպություններ	11,959,952	1,039,816	5,225,900	–

Կապակցված կողմին տրված փոխառությունը կրում էր տարեկան 3 ամսյա LIBOR գումարած 1% տոկոսադրույք և մարվել է 2020թ. մայիսին:

2020թ. մայիսի 25-ին ԸՆԿերությունը 2,930,333 հազար ՀՀ դրամ հայտարարված շահաբաժինները հաշվանցել է վերջնական մայր կազմակերպությանը տրված փոխառության մնացորդի հետ (2019թ. մայիսի 20-ին՝ 967,029 հազար ՀՀ դրամ):

«ՄԱՔՈՒՐ ԵՐԿԱԹԻ ԳՈՐԾԱՐԱՆ»

ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Ներածություն

«Մաքուր երկաթի գործարան» բաց բաժնետիրական ընկերությունը (Ընկերություն) 1968թ. հիմնադրված Մաքուր երկաթի փորձա-արդյունաբերական գործարանի իրավահաջորդն է: Գործարանը 1995թ. սեփականաշնորհման արդյունքում վերակազմավորվել է «Մաքուր երկաթի գործարան» բաց բաժնետիրական ընկերության:

Ընկերության հիմնական գործունեությունը ֆերոմոլիբդենի և եռակալված մետաղական մոլիբդենի արտադրությունն է: 2015թ. Ընկերությունը սկսել է մատուցել մոլիբդենի խտանույթի վերամշակման ծառայություններ: 2016թ. Ընկերությունը ժամանակավորապես դադարեցրել է եռակալված մետաղական մոլիբդենի արտադրությունը տեխնոլոգիական վերազինում իրականացնելու նպատակով: 2020թ.-ից Ընկերությունը սկսել է արտադրել և վաճառել պղնձի տեխնիկական օքսիդ:

Ընկերության հասարակ անվանական բաժնետոմսերը ցուցակված են «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ի կողմից: Ընկերությունը՝ որպես հաշվետու թողարկող, հետևում է ՀՀ Կառավարության 30.12.2010թ. թիվ 1769-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Կորպորատիվ կառավարման կանոնագրքի դրույթներին:

1. Ընկերության գործունեության հիմնական ցուցանիշները 2020թ.

Ընկերության հաշվետու տարվա հասույթը կազմել է 6,620,158 հազ. ՀՀ դրամ, որից 6,452,383 հազ. ՀՀ դրամը ձևավորվել է Զանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ ՓԲԸ-ին մոլիբդենի կոնցենտրատի վերամշակման ծառայությունների մատուցումից: Այսպես, 2020թ. Ընկերությունը վերամշակել է 6,161 տոննա մոլիբդենի կոնցենտրատ՝ 2,622 տոննա մոլիբդենի պարունակությամբ (2019թ.՝ 8,380 տոննա կոնցենտրատ՝ 3,611 տոննա մոլիբդենի պարունակությամբ): Ընկերության արտադրության ծավալների կրճատման հետևանքով հասույթը 2020թ. 2019թ.-ի համեմատությամբ նվազել է 2,156,764 հազ. ՀՀ դրամով կամ 25%-ով: Արդյունքում Ընկերության համախառն շահույթը և գործառնական շահույթը նվազել են 1,242,374 հազ. ՀՀ դրամով (36%-ով) և 1,081,151 հազ. ՀՀ դրամով (47%-ով)՝ համապատասխանաբար: Ֆինանսական եկամուտների աճի շնորհիվ՝ ներառյալ արտարժույթի վերագնահատումից զուտ օգուտների, Ընկերության հարկումից հետո շահույթը 2020թ. 2019թ.-ի համեմատությամբ գրեթե չի փոխվել (աճել է 1,799 հազ դրամով կամ 0.07%-ով):

Ընկերության կայուն զարգացումն ապահովելու, էկոլոգիապես ավելի բարենպաստ արտադրություն կազմակերպելու և աշխատանքի պայմանների բարելավման նպատակով Ընկերությունը հանձն է առել կապիտալ ներդրումների լայնամասշտաբ ծրագիր, որի իրականացումը սկսվել է դեռևս 2016թ. և նախատեսվում է ավարտին հասցնել 2022թ.:

Վերոնշյալ ծրագրի շրջանակներում 2020թ. Ընկերությունը ձեռք է բերել 1,134,063 հազ. ՀՀ դրամի հիմնական միջոցներ (2019թ.՝ 1,822,297 հազ. ՀՀ դրամ):

2020թ. Ընկերության հարկային վճարումները կազմել են 2,347,223 հազ. ՀՀ դրամ՝ ներառյալ շահութահարկի վճարում՝ 1,138,473 հազ. ՀՀ դրամ (2019թ.՝ 2,217,070 հազ. ՀՀ դրամ՝ ներառյալ շահութահարկի վճարում՝ 577,528 հազ. ՀՀ դրամ):

Ընկերության աշխատակիցների միջին թիվը և միջին աշխատավարձի մեծությունը ներկայացված է ստորև՝

Աղյուսակ 1. Աշխատակիցների միջին թվաքանակ և միջին ամսական աշխատավարձ

Ցուցանիշ	2020թ.	2019թ.
Աշխատակիցների միջին ցուցակային թիվ, մարդ	418	425
Աշխատավարձի ֆոնդ, հազ. ՀՀ դրամ	1,817,739	1,880,898
Միջին ամսական աշխատավարձ, հազ. ՀՀ դրամ	362	369

Ստորև ներկայացված են Ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը բնութագրող ամփոփ գործակիցներ՝

Աղյուսակ 2. Ամփոփ ֆինանսական գործակիցներ

Ցուցանիշի անվանումը	31.12.2020թ.	31.12.2019թ.
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS), հազ. ՀՀ դրամ	37.56	37.54
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE), %	8.44	6.46
Ակտիվների շահութաբերություն (ROA), %	7.06	6.26
Զուտ շահույթի մարժա (NPM), %	39.20	29.55
Կապիտալի համարժեքության գործակից, %	83.58	96.94
Բացարձակ իրացվելության գործակից	0.38	1.01
Արագ իրացվելության գործակից	4.81	7.81
Ընթացիկ իրացվելության գործակից	4.94	8.41
Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	5.50	9.00
Դեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	66.39	40.55
Պաշարների շրջանառելիության գործակից	2.44	3.20
Պաշարների շրջապտույտի տևողությունն օրերով	149.74	114.11
Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	21.48	30.89
Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	16.99	11.82

2. Ընկերության գործունեության հիմնական ռիսկերը

Ընկերության գործունեության վրա ազդող նշանակալի ռիսկերից է միջազգային շուկայում մետաղների գների փոփոխությունը, ինչն ուղղակիորեն ազդում է Ընկերության արտադրանքի գնի վրա: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2015թ. հունիս ամսից Ընկերությունը սկսել է աշխատել վերամշակման ծառայությունների մատուցման (կապալի) հիմունքով, գների փոփոխության ռիսկը հիմնականում կրում է պատվիրատուն: Այնուամենայնիվ, Ընկերությունը շարունակում է նաև գնել և վերամշակել մոլիբդենի կոնցենտրատ սեփական արտադրության և վաճառքի նպատակով և գնային ռիսկը կառավարում է գնման և վաճառքի պայմանագրերի ճիշտ համադրման ճանապարհով: Հաջորդ կարևոր ռիսկն արժույթային ռիսկն է՝ այնքանով, որքանով Ընկերության ֆունկցիոնալ արժույթը և այն արժույթը, որով արտահայտված են Ընկերության ֆինանսական ներդրումները և որոշ կրեդիտորական պարտքեր, տարբեր են: Այդ գործարքները հիմնականում արտահայտված են ԱՄՆ դոլարով: Քանի որ Ընկերությունն ակնկալում է որ արտադրական վերազինման հետ կապված ծախսումները հիմնականում կկատարվեն արտարժույթով (հիմնական մեքենասարքավորումները պետք է ներմուծվեն արտերկրից), ֆինանսական ներդրումները ևս պահվում են արտարժույթով:

3. Ընկերության կանոնադրական կապիտալը, բաժնետերերը և դրանց կազմի փոփոխությունը

31.12.2020թ. դրությամբ Ընկերության կանոնադրական կապիտալը կազմել է 690,930 հազ. ՀՀ դրամ՝ բաժանված 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով 69,093 հասարակ անվանական բաժնետոմսի:

31.12.2020թ. դրությամբ Ընկերության անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրում գրանցված է եղել 17 անձ, որոնցից երկուսը հանդիսացել են իրավաբանական (օտարերկրյա), իսկ մնացածը՝ ֆիզիկական անձինք:

31.12.2020թ. դրությամբ Ընկերության նշանակալից բաժնետերերն են եղել՝

- 1) Քրոնիմետ երկաթածուլվածքների Առևտրային ՍՊԸ (ԳԴՀ, Կարլսրուհե, Զյուլթեկենշտոասե 22), որը տիրապետել է Ընկերության 35,223 հասարակ անվանական բաժնետոմսերի, ինչը կազմում է Ընկերության կանոնադրական կապիտալի 50.979%-ը:
- 2) ՔՐՈՆԻՄԵՏ Հոլդինգ ՍՊԸ (ԳԴՀ, Կարլսրուհե, Զյուլթեկենշտոասե 22), որը տիրապետել է Ընկերության 33,639 հասարակ անվանական բաժնետոմսերի, ինչը կազմում է Ընկերության կանոնադրական կապիտալի 48.686%-ը:

4. Ընկերության ներդրումները

հազ. ՀՀ դրամ	31 դեկտեմբեր 2020թ.
«Մետաղագործ» ՓԲԸ	5,000
«Հին Արենի» ՍՊԸ	271,976

31.12.2020թ. դրությամբ Ընկերության բաժնեմասնակցությունը «Հին Արենի» ՍՊԸ-ում կազմել է 23.6%, իսկ «Մետաղագործ» ՓԲԸ-ում՝ 15.94%:

5. Ընկերության բնականոն գործունեության շրջանակներից դուրս կնքված պայմանագրեր

2020թ. Ընկերությունն իր բնականոն գործունեության շրջանակներից դուրս պայմանագրեր չի կնքել:

6. Ընկերության հետ փոխկապակցված անձինք

Բաժնետիրական ընկերությունների մասին ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն փոխկապակցված են համարվում Ընկերության խորհրդի անդամները, գործադիր մարմնի անդամները, գործադիր մարմնի իրավասություններ իրականացնող իրավաբանական անձը կամ դրա տնօրենը կամ դրա խորհրդի անդամները կամ դրա կանոնադրությամբ կամ պայմանագրով նախատեսված՝ ղեկավարման գործառույթներ իրականացնող այլ անձինք, վերստուգող հանձնաժողովի անդամները, Ընկերության անունից հանդես գալու իրավասություն ունեցող այլ անձինք և Արժեթղթերի շուկայի մասին ՀՀ օրենքով փոխկապակցված ճանաչվող այլ անձինք:

2020թ. Ընկերությունը փոխկապակցված անձանց հետ կնքել է հետևյալ գործարքները, որոնց արժեքը գերազանցում է Ընկերության ակտիվների արժեքի 10 տոկոսը.

- Ընկերության Ղեկավարության համատեղ վերահսկողության ներքո գտնվող Զանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ ՓԲԸ-ի հետ կնքված Կապալի պայմանագրի շրջանակներում ստացել է 6,452,383 հազ. ՀՀ դրամի հասույթ ֆերոմոլիբդենի վերամշակման ծառայության դիմաց:

7. Ընկերության կառավարման և վերահսկման մարմինների կառուցվածքի փոփոխությունը

2020թ. Ընկերության տնօրենների խորհրդի կազմից դուրս են եկել Դավիթ Ղալթախյանը և Սաթենիկ Քոսյանը, և տնօրենների խորհրդի նոր անդամներ են ընտրվել Բերնատո Մարիա Կունսամանը, Պետար Կոստովիչը և Տիգրան Մամիկոնյանը: Ընկերության տնօրենների խորհրդի կազմն է՝

Թոմաս Հայլ
Միկել Պոլոսկով
Բերնատո Մարիա Կունսաման
Պետար Կոստովիչ
Տիգրան Մամիկոնյան
Արամ Մամյան

Ընկերության վերստուգող հանձնաժողով կազմն է՝

Սիեզֆրիեդ Գրուպպ
Գաբրիել Էրբս
Նանե Խաչատրյան

Ընկերության գործադիր մարմնի ղեկավարն է Կարեն Հակոբյանը:

«ՄԱՔՈՒՐ ԵՐԿԱԹԻ ԳՈՐԾԱՐԱՆ»

ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՅ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մենք՝ պատասխանատու անձինք, հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Ընկերության ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների տարեկան զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Ընկերության ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որի հետ առնչվել կամ առնչվում է Ընկերությունը:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

Անուն, ազգանուն	Պաշտոն	Պատասխանատվության շրջանակ
Թոմաս Հալլ	Տնօրենների խորհրդի նախագահ	Տնօրենների խորհրդի աշխատանքների կազմակերպում և ղեկավարում
Միկել Պոլոսկով	Տնօրենների խորհրդի անդամ	Պատասխանատու նշանակալից բաժնետերերի հետ հարաբերություններում
Բերնարդ Մարիա Կունսման	Տնօրենների խորհրդի անդամ	Պատասխանատու ֆինանսական հարցերով
Պետար Կոստովիչ	Տնօրենների խորհրդի անդամ	Պատասխանատու կալուն գարգացման հարցերով
Տիգրան Մամիկոնյան	Տնօրենների խորհրդի անդամ	Պատասխանատու տեխնիկական հարցերով
Արամ Մամյան	Տնօրենների խորհրդի անդամ, արտադրության տնօրեն	Պատասխանատու արտադրության գծով
Կարեն Հակոբյան	Գլխավոր տնօրեն	Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարում
Վալերի Թամրազով	Գլխավոր հաշվապահ	Հաշվապահական հաշվառման վարում, ֆինանսական հաշվետվությունների ժամանակին կազմում և ներկայացում